


ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՈԼՈՎՐԱՆ

ԳԻՏԱ-ԳՈՐԾՎԱԾՈՒ ԱԵՐԻՒ.

№ 4

Հ. ՄԱՐԴԻԿԱՆՅԱՆ

ՍԵՐԳԱՆՏԵՍԻ ԿՅԱՆՔԸ
ՅԵՎ.
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԵՐԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՈԼՈՎՐԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԵՐԵՎԱՆ

1940

86.09.

Մ-22

ԱՀ.

Հ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՍԵՐՎԱՆՏԵՍԻ ԿՅԱՆՔԸ
ՅԵՎ.
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.

ՅԵՐԵՎԱՆ

1940

19 NOV. 2010

ՄԵՐՎԱՆՏԵՍԻ ԿՅԱՆՔԸ ՅԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I.

Մերվանտեսի կյանքը և գրական գործունեյությունը պերաբերում եւ այն նշանավոր ժամանակներին, վորը Արեվմայան Յեվրոպայի գրականության պատմության մեջ հայտնի յեւ վերածնության դարաշրջան անունով:

Դա XV դարի յերկրորդ կիսից սկսվող ժամանակաշրջանն եր, յերբ Յեվրոպայի տնտեսական և հասարակական կյանքում տեղի ունեցան խոշորագույն փոփոխություններ: Ֆեոդալական Յեվրոպան իր հին տնտեսաձևով և տրադիցիաներով ապրում եր իր վերջին որերը: Նրան փոխարինելու յեր գալիս բուրժուական հասարակությունը: Վերածնության դարաշրջանը հին, ֆեոդալական կարգերի քայլայման և նոր, բուրժուական հարաբերությունների ձեվավորման ու ստեղծման ժամանակաշրջանն եր:

Տնտեսական կյանքի փոփոխության հետ միասին, փոփոխություն եւ կատարվում նաև յեվրոպական յերկրների հասարակական-քաղաքական կյանքում:

«Թագավորական իշխանությունը՝ հենվելով քաղաքացիների գրա, ջարգեց ֆեոդալ ազնվականության ուժը և հիմնեց խոշոր, ըստ եյության ազգային միապետություններ, վորոնց մեջ իրենց դարձացումը ստացան ժամանակակից յեվրոպական ազգերը և ժամանակակից բուրժուական հասարակությունը»¹:

Այդպիսով, քայլ առ քայլ կապիտալիզմը տարածում եր իր ազգեցությունը Յեվրոպայի տնտեսական ու քաղաքական կյանքի բոլոր բնագավառների վրա: Իհարկե, փշտելով ֆեոդալական շահագործման ձեվերը, կապիտալիզմը ստեղծեց շահագործման նոր, ավելի դաժան շղթաներ: Կապիտալիզմի առաջին քայլերը կապիտալի նախնական կուտակման շրջանում սերտորեն կապ-

¹ Մարքսը և ենգելսը արվեստի մասին. Պետհրատ 1934 թ.

Պատ. խմբագիր՝ Ելիզ Պարուսյան
Տեխ. խմբագիր՝ Զ. Մարուխյան
Սրբագիր՝ Մ. Հայնազարյան
Կոնսլուտ սրբագիր՝ Վ. Յանայան

Գլավիալ լիազոր ա. 1104, պատ. № 99,

ալիքաժ 1000

Պետհամալսարանի Հրատարակչության տպարան. Յերեան, Արտվան № 104



1499
40

ված եյին նոր հայտնագործված յերկրների խաղաղ բնիկների գաղանային վոչչչացման և ստրկացման հետ, իսկ յերկրում ահա- վոր չափերի յեր հասել գյուղացիության հեղաշրջման պրոցեսը:

Բայց, այնուամենայնիվ, կապիտալիզմը ֆեոդալական կարգե- րի դեմ մղած պայքարում, այդ ժամանակ հանդես եր գալիս վոր- պես առաջադիմական հասարակական ուժ:

Ֆեոդալական Յեվրոպայի բուրժուական դարգացման ար- դյունքներից մեկն ել յեղավ այդ ժամանակաշրջանում առաջա- ցած կուլտուրական-գրական խոշորագույն հեղաշրջումը, վորն ենքելմն անվանում եւ «առաջադիմական մեծագույն հեղաշրջումը, վոր ապրել եր մինչ այդ մարդկությունը»¹:

Հեղաշրջման հիմքում ընկած եր աշխարհի և մարդու հայտնագործման ձգտումը և «միայն այժմ իսկապես հայտնա- գործվեց աշխարհը և հիմք դրվեց նորագույն համաշխարհային առևտրի համար ու արհեստից մանուֆակտուրային անցնելու համար, վորն իր հերթին հանդիսացավ ժամանակակից արդյու- նաբերության յերակետը»²:

Կուլտուրական նոր շարժումը ձգտում է մարդուն ազատել այն ֆանտաստիկական աշխարհից, վոր ստեղծել եր կաթոլիկա- կան յեկեղեցին ու կրոնը, և նրան մոտեցըրել ուեալ աշխարհին: Վճռականապես բացասվում է հավատի բացարձակ հեգեմո- նիան և առաջ ե քաշվում բնության ու հասարակական կյանքի ուսումնասիրության ազատության իրավունքը: Կրոնական վե- րացական դատողություններին ու յեկեղեցական սխոլաստիկա- յին հակադրվում են դիտությունները, վորոնք հիմնված են իրա- կան փաստերի ուսումնասիրության վրա:

Յեթե միջնադարյան սխոլաստիկները հասարակական կամ բնության այս կամ այն յերեվույթի բացարությունը վորոշում եյին սստվածաբանական զրքերում, ապա Վերածնության դարա- շրջանի գիտնականը դիմում ե կենդանի փորձին, դիտում ե, ուսումնասիրում, չափում: Բնական գիտությունների գարգացումը արմատապես փոխում է մարդկանց պատկերացումները բնու- թյան և հասարակական կյանքի մասին, նրանք դառնում են բնության ուժերը մարդուն յենթարկելու հզորագույն միջոցներ:

Կուլտուրական նոր շարժումը ջախջախիչ քննադատության յենթարկեց ասկետական ուսմունքը աշխարհիկ կյանքի հանցա-

վոր լինելու մասին: Նա հանգես յեկավ մարդու բնական ինքնու- րուման պաշտպանի դերում, առաջազրեց մարդկային բոլոր ուեալ պահանջների, ցանկությունների լիակատար բավարարման սկզբունքը: Վերածնության դարաշրջմանի գրողներն ու նկարիչ- ներն իրենց ստեղծագործություններում ու սքանչելի նկարներում փառաբանում են մարդու յերկրային յերջանկությունը, նրա հզորությունն ու ստեղծագործական կարողությունների ուժը:

Միջնադարյան տեսիլներն ու ուրվականները դուրս նետու- վեցին գրականության բնագավառից: Գրականության առանց- քը դարձավ ուեալ մարդը, հասարակությունը, բնությունը:

«Բյուզանդիայի կործանման ժամանակ փրկված ձեռագրե- րում, չոռմի ավերակների տակից պեղած հին արձաններում ապշահար Արևմուտքի առջև կանգնեց մի նոր աշխարհ—հին չու- նաստանը: Նրա (կլասիկ... պլաստիկ) պայծեառ պատկերի առաջ չքացան միջնադարի ուրվականները. Իտալիայում չլսված ծաղկ- ման հասավ արվեստը, վորը կարծես ցոլացումն եր կլասիկ հնու- թյան և վորը հետագայում այլս յերբեք չհասավ այդ բարձրու- թյան: Իտալիայում, ֆրանսիայում, Գերմանիայում առաջացավ նոր, առաջին ժամանակակից գրականությունը: Անգլիան և իս- պանիան այնուհետև շուտով ապրեցին իրենց գրականության կլասիկ դարաշրջանը»³:

Իսպանական գրականության այդ կլասիկ դարաշրջանի ամենախոշոր գեմքը Սերվանտեսն եր:

Միգուել դե Սերվանտես Սավկերան ծնվել է 1547 թվին Ալկալա գե Ենարես փոքրիկ քաղաքում (Մադրիդի մոտ): Նա աղքատացած հիդալգոյի վորդի յեր, հայրը պարապում եր քեց- կությամբ: Նախնական կրթությունը ստացել է հայրենի քա- ղաքում, ապա ուսանել և Սալամանկայի համալսարանում, վոր- տեղ զրադգել ե փիլիսոփայության և իրավաբանական գիտու- թյունների ուսումնաշերությամբ: Դեռ շատ վաղ հասակից Սեր- վանտեսը յերազում եր բանաստեղծ, գրամատուրդ և առնասա- րակ գրող դառնալու մասին: Սերվանտեսի այս ցանկությունները խրախուսվում եյին նրա ուսուցիչ, հումանիստ Խուան Լոպես դե Գոյոսի կողմից: Բայց տնտեսական ծանր վիճակն ու մշտական կարիքը Սերվանտեսին ստիպում են մտածել աշխատանքի մասին: Նրան չհաջողվեց իսպանիայում համապատասխան աշխատանք

1. Մարքսը և Ենգելսը արվեստի մասին, եջ 123: Պետհրատ 1934թ.

2. Նույն տեղ, եջ 123:

3. Մարքսը և Ենգելսը արվեստի մասին, Պետհրատ 1934թ., եջ 123

գտնել: 1569 թվին նրան հաջողվում ե հասարակ ծառայի պաշտոնով աշխատանքի մտնել կարդինալ Ակլավիվի մոտ և նրա հետ մեկնել իտալիա, Հռոմ:

Իտալիայում ապրելը Սերվանտեսի համար այն նշանակությունն ունեցավ, վոր նա ուսումնասիրեց վոչ միայն իտալերեն լեզուն, այլև ծանոթացավ իտալական Վերածնության դարաշանի կուլտուրայի և գրականության հետ և հետո իտալացիների միջոցով ծանոթացավ նաև Անտիկ Աշխարհի կուլտուրային և գրականությանը:

Բայց Սերվանտեսի աշխատանքի ստորացուցիչ ընույթը չեր կարող գժգոհություն չառաջացնել նրա մեջ: Այդ ժամանակ իսպանական թագավոր Ֆիլիպպ 2-րդը և Վենետիկյան հանրապետությունը կորիվ սկսեցին թուրքերի գեմ: Սերվանտեսը, թողնելով Ակվավիվի արքունիքը, անցնում է բանակ վորպես հասարակ շարքային զինվոր: Ամբողջ չորս տարի Սերվանտեսը գտնվում է ուսղմական արշավանքների ու պատերազմների մեջ: Նա վորպես զինվոր աչքի յե ընկնում իր խիզախությամբ ու համարձակությամբ և կարճ ժամանակամիջոցում վայելում և դնդում իր ընկերների սերը և հարգանքը:

Լեպանտոյի ծովային ճակատամարտում (1571 թ.) Սերվանտեսը ծանր վիրավորվում է կրծքից և զրկվում է ձախձեռքը գործածելու հնարավորությունից: Առողջանալուց հետո նա մասնակցում է Նավարինի և Թունիսի ճակատամարտերին և միայն 1575 թվին, պատերազմական գործողությունները խաղաղվելուց հետո, վորոշում է վերադառնալ հայրենիք:

Բացի ջախջախված ձախ ձեռքից և գլխավոր հրամանատարի հանձնարարական նամակից, Սերվանտեսը վոչինչ չի տանում հայրենիք:

Նեապոլից տուն վերադառնալու ճանապարհին Սերվանտեսն ընկնում է մեծ փորձությունների մեջ: Այն նավը, վորով նա հայրենիք եր գնում, գերի յե վերցվում ծովահենների կողմից և տարվում է Ալֆիր: Ամբողջ հինգ տարի նա մնում է գերության մեջ, յենթարկելով ամենածանր փորձությունների: Մի քանի անգամ փորձում ե փախչել, բայց բոլորը վերջանում են անհաջողությամբ: Միայն 1580 թվին նրան հաջողվում է վճարել փրբեկինը և աղատվել գերությունից:

Հայրենիքը Սերվանտեսին շատ վատ է ընդունում: Իշխա-

նությունները միանգամայն անտարբեր վերաբերմունք են ցույց տալիս Սերվանտեսի նկատմամբ: Մայրը և քույրը իրենց ամբողջ ունեցվածքը վաճառել եյին Սերվանտեսին գերությունից ազատելու համար և այժմ գտնվում եյին տնտեսական ամենածանր պայմաններում: Հարկավոր եր նրանց ոգնել, հարկավոր եր սեփական ֆիզիկական գոյությունը պահպանել:

Սերվանտեսը հերոսաբար պայքարում է կարիքի և թշվառության գեմ, փորձելով իր ուժերը զրամատուրգիայի բնագավառում: Բայց նրա զրամաները առաջին բեմագրությունից հետո հանվում են ունկերուարից: Նրա գրած բանաստեղծությունները անցնում են աննկատելի, առաջին հովվական վեպը, «Գալատեան» հաջողություն չի ունենում:

Սերվանտեսին սպառնում է լիակատար թշվառությունը: 1587 թվին նա հեռանում է Մադրիդից և Սերվիլիայում ստանձնում է հարկահավաքի պաշտոնը: Նա լինում է իսպանական գյուղերում, ծանոթանում է գյուղացիության կյանքին ու կենցաղին: Բայց Սերվանտեսի հետ պատահում է նոր գժբախտություն: Նա բավականին մեծ գումար և հանձնում բանկիրներից մեկին պետական գանձարկղը մուծելու համար, բայց բանկիրը դրամի հետ միասին անհայտանում է: Սերվանտեսը կանչվում է դատական պատասխանատվության և բանտարկվում ե: Ճիշտ ե, Սերվանտեսի ընկերները անմիջապես ոգնում են նրան և ազատում բանտից, բայց նա 1598 և 1602. թ. թ. նորից բանտ և նստում: Միայն 1604 թվին նրան հաջողվում է բոլոր հաշիվները մաքրել պետական գանձարկղի հետ և ազատ չնչել:

Բայց, չնայած այս բոլորին, Սերվանտեսը չի հրաժարվում ստեղծագործական աշխատանքներով զբաղվելուց:

Հալածանքի և ստորացման այս տարիներին ե, վոր նա գրում է իր նշանագոր «Դոն Կիխոտը», վորի առաջին մասը լույս տեսավ 1605 թվին և ունեցավ չտեսնված հաջողություն: Բայց այս հաջողությունը մեծահանձար հեղինակին նյութական վոչ մի ոգնություն չտվեց: Նա վարում է նույն կիսաքաղց կյանքը Վալյագություն և Մադրիդում:

Նրա ուժերը թուլանում են, նա հյուծվում է, բայց նույն կրքով իրեն նվիրում է գրական ստեղծագործական աշխատանքներին:

Սերվանտեսն իր կյանքի վերջին շքջանում նույնպես չկարողացավ հաղթել իր ամենավոխերիմ և ամենադաժան հակառակորդներից մեկին—կարիքին: Յեզ նա մահացավ ծանր զրկանքի ու կարիքի մեջ 1616 թվի ապրիլի 23-ին, իր կնոջ փոքրիկ տնակում:

Սերվանտեսի թողած գրական ժառանգությունը չնայած մեծ չե իր քանակով, բայց շատ բազմազան ե:

Յեթե հաշվի չառնենք նրա բանաստեղծությունները և այն յերեսուն կոմեդիան ու ինտերմեդիան, վոր մեղ չեն հասել, ապա նրա ստեղծագործությունների ցանկը հետեւյալն ե. «Գալատեա» առաջին մաս (1585 թ.), «Դոն Կիխոտ» առաջին մաս (1605 թ.), «Խրատական նովելլաներ» (1613), «Ճանապարհորդություն գեղի Պառնաս» (1614), «Դոն Կիխոտ» յերկրորդ մաս (1615 թ.), դրամաների ժողովածու (ութ կոմեդիա և ինտերմեդիա, 1615 թ.): Սերվանտեսի մահից հետո լույս տեսավ Պերսիւսի և Սիխիսմունդի փոքրությունները» վեպը (1617 թ.):

Բացի այդ, Սերվանտեսի մի շաբթ գրավոր հայտարարությունների համաձայն նա գրել և պատրաստել ե տպագրության «Գալատեայի» յերկրորդ մասը, «Մի շաբթ պարտեզում» վերնագրով ժողովածուն, «Աչքակապություն» կոմեդիան և մի ստեղծագործություն «Փառաբանված Բերնարդոն» անունով:

Սերվանտեսն ընթերցող լայն հասարակության հայտնի յե վորպես միայն «Դոն Կիխոտի» հեղինակ: Սրա պատճառն այն ե, վոր «Դոն Կիխոտը» վոչ միայն Սերվանտեսի լավագույն ստեղծագործությունն ե, ինչպես ասում են, նրա գլուխ գործոցը, այլև «Դոն Կիխոտը» համաշխարհային գրականության ամենց շատ կարդացվող հոյակապ հուշարձաններից մեկն ե: Ճիշտ ե, իհարկե, վոր Սերվանտեսի հանճարը իր ամբողջ թափով արտահայտվել ե այս վեպում, բայց Սերվանտեսը վոչ պակաս դեր ե խաղացել նաև իսպանական թատրոնի և յերօպական ռեալիստական նովելլայի պատճության մեջ: Գյոթեն նույնիսկ գտնում եր, վոր Սերվանտեսի նովելլաները բարձր են «Դոն Կիխոտից»: Այս իհարկե չափազանցություն ե, բայց Գյոթեն յերեկի այս չափազանցության միջոցով ցանկացել ե ընդգծել, վոր Սերվանտեսը բացի «Դոն Կիխոտից» ստեղծել ե նաև այլ գործեր, փորոնց արժանիքները շատ բարձր են:

Յեզ իսկապես վերածնության դարաշրջանի իսպանական դրամատուրգիայի և թատրոնի առաջացումը և ձևավորումը սեր-

տորեն կապված ե նաև Սերվանտեսի անվան հետ: Ժամանակաշինության չկարողացան գնահատել Սերվանտեսի դրամաներն ու ինտերմեդիաները, բայց, այնուամենայնիվ, Սերվանտեսի կատարած աշխատանքներն այս բնագավառում իզուր չանցան:

Նոր հումանիստական թատրոն և դրամատուրգիա ստեղծելու համար, նախ անհրաժեշտ եր ուժեղ հականարված տալ միջնադարյան կրոնական թատրոնին և հոգեվոր դրամաներին:

Սերվանտեսն առաջիններից մեկն եր, վոր գուրս գալով հին թատրոնի և դրամատուրգիայի դեմ, առաջադրում ե ուժիսական թատրոնի և դրամատուրգիայի պահանջը:

Առաջդրելով ռեալիստական դրամատուրգիայի հարցը, Սերվանտեսը ջախջախիչ քննադատության և յենթարկում միջնադարյան թատրոնն ու նրա ռեալիստական թատրոնը: «Իսկ յեթե վերցնենք հոգեվոր դրամաները, նրանց մեջ վորքան չեղած հրաշք ներ և կեղծ ըմբռնված իրադարձություններ կան... և այս բոլորն արվում ե ի վնաս ճշմարտության, հակառակ պատմության»:

Սերվանտեսն իր դրամաներում և ինտերմեդիաներում աշխատում իր հավատարիմ մնալ ռեալիզմի սկզբունքներին: Նա իր դրամաների թեման վերցնում է վոչ թե սրբերի և հրեշտակների կյանքից և իր ստեղծագործությունը կառուցում է վոչ թե կրոնական այս կամ այն դոգմայի վրա: Նա իր դրամաների թեման վերցնում է հսպանիայի ներկա և անցյալ կյանքից, աշխատում ե իր դրամաները դարձնել նեալ կյանքի հայելի, տալ իրադարձությունների և բարքերի ճիշտ նկարագրությունը, հավատարիմ մնալ պատմական ճշմարտությանը:

Նրան նախ հետաքրքրում է իսպանական ժողովրդի հերոսական անցյալը, նրա մղած պայքարը ոտար կեղեքիչների և հարստանարիչների դեմ: Նա իր «Նումանի գրավումը» փողքերգության մեջ փառաբանում է իսպանական ժողովրդի հերոսական պայքարը հոսմայեցիների դեմ: Հոսմեական բանակը 14 տարի պաշարելով նույնանու քաղաքը, չի կարողանում փշրել նրա բնակիչների դիմադրությունը և գրավել քաղաքը: Սպառելով գիմադրության բոլոր հնարավոր միջոցները, նույնանու բնակիչները մահը գերադասում են սարկությունից: Նրանք մասսայաբար ինքնասպանություն են գործում: Հոսմեական բանակը վոչ մի կենդանի մարդ չի գտնում ավերված քաղաքում: Սերվանտեսի այս վողքերգությունը հուզել և վոգենչել ե իսպանական ժողովրդին նրա պայքարի բոլոր շրջաններում:

Յերբ նապուենի բանակը ներխուժեց իսպանիա, շրջապատված Սարագոսսայում բեմադրվում եր այդ վողբերգությունը և վոդենչում եր իսպանացիներին: Սերվանտեսի վողբերգությունը մի քանի տարի անընդհատ վոգենչում եր Մադրիդի հերոսական պաշտպաններին:

Փառաբանելով իսպանական ժողովրդի հերոսական անցյալն ու անկախության և ազատության համար կյանքը տալու պատրաստակամությունը, Սերվանտեսը ըմբոստանում ե իր ժամանակա ամենառեակցիոն ուժի՝ հոգեվորականության դեմ: Նա մերկացնում ե «սուրբ հայրերի» այլասեռված կյանքը, սեռական սանձարձակություններն ու շառլատանությունը («Սալամանկայի քարայրը»): Սերվանտեսն ըմբոստանում ե ֆեոդալական ընտանիքի բոնապետական տրադիցիաների դեմ, հանդես ե դալիս կնոջ ազատության պաշտպանի գերում («Խանդու ծերունին»): Սերվանտեսը քննադատում ե վոսկու թագավորությունը և մերկացնում ե նրա ճակատագրական դերը իսպանիայի համար:

Կարելի յե համարձակորեն պնդել, վոր Սերվանտեսը շատ կողմերով հեշտացրեց այն պայքարը, վոր մզում եր կոպե գե վեգան ու նրա դպրոցը նոր ուսալիստական թատրոն և դրամատուրգիա ստեղծելու բնադրավառում:

Բայց գրամատուրգիայի բնագավառում առաջնությունն անպայման պատկանում եր կոպե գե վեգային, Տիրսո դե Մուխնային և Կալդերոնին: Սերվանտեսի գրական ժառանգության մեջ ամենաարժեքավորը նրա նովելլաներն են և «Դոն Կիխոտը»:

II.

Ծեսալիստական նովելլայի հայրենիքը սովորաբար համարվում ե Խտալիան, իսկ նրա հիմնադիրը՝ Բոկկաչիոն: Այս անպայման ձիշտ ե: Բայց, այսուամենայնիվ, սրա հետ միասին չի կարելի բացասել այն վճռական դերը, վոր խաղաց իսպանիան այս ժանրի առաջացման և ձեվավորման պատմության մեջ և այն աշխատանքը, վոր կատարեց այս բնագավառում Սերվանտեսը: «Խրատական նովելլաների» ներածության մեջ Սերվանտեսը նշում ե, վոր իրենից առաջ իսպանիայում գոյություն չի ունեցել ինքնուրույն իսպանական նովելլա, վոր նրանք բոլորն ել կամ թարգմանություններ են յեղել և կամ ընդորինակություններ:

«Յես առաջինն եմ, — ասում ե Սերվանտեսը, — վոր գրեցի նո-

վելաներ կաստիլական լեզվով, վորովհետեւ մեզ մոտ հրատարակվող բազմաթիվ նովելլաները թարգմանված են ոտար լեզուներից — իմ նովելլաները իմ լիակատար սեփականությունն են: Դրելով այդ նովելլաները, յես վոչ վոքի չեմ ընդորինակել և վոչ վոքից վոչինչ չեմ գողացել: «Նրանք ծնվել են իմ հոգում, լույս աշխարհ են յեղել իմ գրչի միջոցով և այժմ նրանք պետք ե աճեն ու աճեն տպագրական մեքենայի գրկում»¹:

Այս, իհարկե, չի նշանակում, թե Սերվանտեսը բացասում ե այն հսկայական կուլտուրական ժառանգությունը, վոր նա յուրացրել ու վերամշակել ե իր նովելլաները գրելու ժամանակ: Նրա նովելլաները հանդիսանում են այն բոլոր դրական նվաճումների սինթեզը, վոր ստեղծվել եր այդ ժամանակացման և զարգացման վողջ պատմության ընթացքում թե Խտալիայում, և թե Իսպանիայում:

Մասնավորապես Իսպանիայում Սերվանտեսից առաջ արդեն ձեվավորվել եր գրական մի ժանր, վորը հանդիսանում ե վոչ միայն ուսալիստական նովելլայի, այլև ուսալիստական վեպի յելակետը: Այդ ժանրը հայտնի յե պիկարայական նավելլա անունով:

Պիկարոն այդ գարաշընի իսպանիայի ամենատիպիկական դեմքերից մեկն եր, յեթե վոչ կենտրոնական դեմքը: Վոսկու և արծաթի հսկայական պաշտամների կուտակումը իսպանական իշխող դասակարգերի ձեռքին վոչ միայն չբարելավեց ժողովրդական լայն մասսաների տնտեսական վիճակը, այլև ծանր աղղեցություն գործեց նրանց տնտեսական կյանքի վրա: Ընկնելով կապիտալիստական նախակղբնական կուտակման «սրի և հրի» պրակտիկայի վոլորապտույտի մեջ, զրկելով գիղիկական գոյությունը պահպանելու բոլոր հսարավոր միջոցներից, միլիոնավոր մարդիկ կանգնեցին ծայրահեղ չփափրության առաջ: Հասարակության չնչին փոքրամասնության ձեռքին կուտակված հսկայական հարստության հետ միասին աճում ե թշվառությունն ու մուրացկանությունը: Պատմաբանները այդ գարաշընում հաշվում են հարյուր հիսուն հազարից ավելի մուրացիկներ:

Զքավորության և աղքատության գիրկը նետված մարդիկ պետք ե պայքարելին իրենց գիղիկական եյությունը պահպա-

1. Сервантеս «Назидательные новеллы», изд. «Academia» 1935 г. ч. 1, стр. 6.

նելու համար, մի կտոր հացի համար, «արեվի տակ մի անկյուն գտնելու» համար:

Յեվ բոլորվին զարսանալի չե, վոր այդ պայքարի գենքերից մեկը դարձավ գողությունը, ճարպիկությունը, խորամանկությունն ու խարդախությունը: Ահա այս կարգի մարդկանց իսպանիայում անվանում եյին պիկառ, վոր նշանակում ե ճարպիկ, խարերա, ինտրիգան, խորամանկ: Պիկարոյական նովելլայի հերոսը հենց այդ պիկառն ե, վորի անունով ել կոչվում ե այդ ժանրը:

Պիկարոյական նովելլայի ամենակլասիկ գործերից մեկը համարվում ե «Լասարիլլայի կյանքը» („La vida de Lazarillo de Tormes» 1554թ.):

Այստեղ պատկերացված ե Լասարիլլոյի կյանքը, վորը վաղ հասակից կորցնելով հորը, Փիզիկական գոյությունը պահպանելու նպատակով ծառայության և մտնում մի կույր մուշացիկի մոտ վորպես առաջնորդ և այնուհետև ծառայում ե այլ բազմաթիվ տերերի մոտ: Այս հանգամանքը (բազմաթիվ տերերի մոտ ծառայելը) հեղինակին հնարավորություն ե տալիս ամենավառ գույներով նկարագրել XVI դարի իսպանական հասրակական կյանքը իր բոլոր տիպական կողմերով:

Ֆաբուլայի գլխավոր առաջմղիչ ուժը Լասարիլլոյի պայքարն ե մի կտոր հացի և ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Սրա հետ միասին նովելլայում տրվում ե ֆեռուալական իսպանիայի բոլոր խոցերի և այլանդակությունների մերկացումը, ջախջախիչ քննադատության և յենթարկվում հոգեփորականությունը, ծաղրվում ե կործանվող ասպետությունը: Բայց, այնուամենայիվ, նովելլայի հիմնական թեման նոր ձեզավորվող բուրժուական հասարակության նկարագրությունն ե, նրա կոպիտնյութական պրակտիկայով և եղոխստական շահերի բաղխումով: Նյութական արժեքների նկարագրությունը մարդուն հավասարագոր արժեք և նշանակություն են ստանում: Ցույց ե տրված, վոր մարդը մինչև կոկորդը խրված ե այդ նյութական, առարկայական աշխարհի մեջ և վոր մարդուն գնահատելու չափանիշը դարձել են այդ առարկաները:

Նովելլայի շարունակության մեջ, վորը պատկանում ե այլ հեղինակի, Լասարիլլոն այսպիսի դատողություններ ե անում վոսկու մասին. «Ո՛վոսկի, իգուր չե, վոր մարդկության մեծ մասը քեզ համարում ե աստված: Դու ամեն մի բարիքի աղ-

բյուր և բոլոր թշվառությունների պատճառ: Դու բոլոր արվեստների ստեղծող և կատարելագործող: Թու պատճառով մարդիկ գիտությունն են ձեռք բերում մտքեր են պաշտպանում, խորտակվում են քաղաքաների ամրոցները և նրանց փլատակների վրա կործանվում և բարձրանում են թագավորները: Դու պաշտպանում ես առաքինությունը և միաժամանակ կործանում ես այն: Դու պաշտպանում ես աղջկա վողջախոնությունը և միաժամանակ կործանում ես այն: Զետ վոչ մի գժվարություն, վոր շփոթեցնի քեզ: Հետ վոչ մի տեղ վոր վոտք չդնես:

Իսպանական կյանքի այս կողմերը ցայտուն կերպով մերկացված են մի այլ պիկարոյական նովելլայում՝ «Գուսման դե Ալֆարչեյի կյանքը» (1599), վորը պատկանում ե Մատեո Ալեմանի գրչին:

Ահա Գուսմանի դատողությունները չքավորության մասին. «Չքավորը շրջանառությունից դուրս նետված գրամ ե, վորոցի ցեխ, հարստի բեռնակիր... յեթե նա խոսում ե, նրան չեն լսում, բոլորը խուսափում են նրան հանդիպելուց, յեթե նա խորհուրդ ե տալիս, դատապարտում են, յեթե նա հրաշքներ ե գործում, մեղադրում են կախարդության մեջ, յեթե նա առաքինի յե, պնդում են, թե նա խարերա յե...»:

Բոլորովին այլ ե հարուստը. «Նրա ամբարները լիքն են հացով, կճուճները՝ յուղով, սնդուկները՝ վոսկով... բոլորը նրան լավ են ընդունում, նրա հիմարությունները համարում են իմաստություն, խորամանկությունը՝ շրջանայեցողություն, ժլատությունը՝ չափավորություն, բթամտությունը՝ սրամտություն, շաղակարատությունը՝ հասարակությունն զբաղեցնելու ընդունակություն: Նրա բոլոր մեղքերը և սխալները ներվում են: Նրանից բոլորը վախենում են և վոչ վոք չի համարձակվում նրա ձանապարհին կանգնել: Իր բոլոր գործերի մեջ, ինչպես դատավորը, այնպես ել քննողն ու վկան ինքն ե: Նա ստիպում է կեղծիքն ընդունել ձմարատության տեղ: Որենքը, հասարակական կարծիքը, բոլորը նրա կողմն են, վորովհետև դրամը տաքացնում և աշխուժացնում ե բոլորի արյունը...»:

Գուսմանը շատ լավ ե հասկանում նաև վոսկու գերն ու եյությունը. «Վոսկին ամեն ինչից բարձր ե, բարձր և ձաշակից, տեսողությունից, շոշափելիքից, լսողությունից, հոտոտելիքից, բարձր և բոլոր զգացմունքներից: Բոլորի մեջ ամենակարեվորը

Նրա գեղին փայլն ե, նրա գեղեցկության և կատարելության զարգացումը: Ծախսելու համար վոսկի ունենալ՝ այդ չի նշանակում հաճույք ստանալ նրանից: Վոսկուց հաճույք կարելի յեստանալ այն դեպքում, յերբ չափից շատ ունես և յերբ բոլոր զգացմունքներդ հրապուրված են նրանով: Տեր աստված, ինչպես ե սիրաց սեղմվում, յերբ գրպանում մի կոպեկ չկա... Ի՞նչպիսի հետեւանքներ ե ունենում գրամ չունենալը... ի՞նչպես ես սկսում ատել քո շրջապատը, նույնիսկ ամենասիրելի առարկաները, յերբ այդ բոլորը չես կարող գնահատել և ձեռք բերել»:

Պիկարոյական նովելլան ցույց ե տալիս, վոր մարդկային բոլոր արժեքները դարձել են առ ու ծախի առարկա, վոր գընվում և վաճառվում ե և աղնվությունը և անկեղծությունը և առաքինությունը և որենքը և ճշմարտությունը և խելքն ու պրամտությունը: Մարդկային լավագույն զգացմունքների հետ մշասին վաճառքի յեն հանվում սերն ու մարմինը: Այլ խոսքով՝ պիկարոյական նովելլան ցույց ե տալիս ֆեռղալական կապանքներից աղատագրված մարդու ոեալ վիճակը նոր ձեվավորվող բութուական հասարակության պայմաններում:

Ճիշտ ե, պիկարոյական նովելլան չի զբաղվում հումանիստական իդեալների և բութուական պրակտիկայի անհերդաշնակության և անհամապատասխանության հարցերով: Բայց այն, ինչ վոր պատկերացված ե այստեղ, ցուցադրում ե մեծ հումանիստների բոլոր լիդեալների վողբերգական կատաստրոֆան: Հումանիստների պայքարը բազմակողմանի և ներդաշնակ մարդու համար, մարդու բոլոր ստեղծագործական կարողությունների վիճատար և աղատ զարգացման համար, այդ դարաշրջանում հնարավոր եր ֆեռղալական Յեվրոպայի բութուական զարգացման հետեւանքով: Բայց այդ բութուական զարգացման վոզդառանձնահատկությունն այն եր, վոր նա հիմք ստեղծելով հումանիստական շարժման համար, միաժամանակ մահվան դատապարտեց այդ շարժման հիմնական լողունգների ոեալ իրագործման բոլոր հնարավորությունները:

Սերվանտեսի ինչպես «Խրատական նովելլաների», այնպես ել «Դուռ կիխոտի» յելակետը յեղել են պիկարոյական նովելլայի վերոհիշյալ տրադիցիաները: Մերկացնելով անհատի լիակատար աղատագրմանը թշնամական բութուական սկսակում, Սեր-

վանտեսը միաժամանակ ցուցադրում ե հումանիստական իդեալների և այդ պրակտիկայի բոլոր հնարավոր տարածայնությունները և աղաղակող հակասությունները:

Ըստական նովելլաների՝ կարեվորագույն թեմաներից մեկը սիրո, սեռերի փոխարարերության և ընտանիքի հարցն ե: Ինչպես վերածնության դարաշրջանի բոլոր հումանիստ զրոյները, այնպես ել Սերվանտեսը սերը հոչակում ե վորպես ընական զգացմունք, մարդու բնական եյության հզորագույն արտահայտություններից մեկը: Սեռերի փոխարարերության և ամուսնության բնագավառում քննազատելով նյութական հաշիվների պրակտիկան և դասային հավասար վիճակների գործող տրադիցիաները, Սերվանտեսը գտնում ե, վոր ընտանիքը պետք ե խարսխվի միայն փոխագարձ սիրո և հարգանքի վրա:

Այստեղից հասկանալի յե, թե ինչու Սերվանտեսը գուրս ե գալիս այն ամուսնության դեմ, վորը տեղի յե ունեցել զրամի միջոցով («Խանգոտ եստրամագուցքին»): Նա քննազատում ե սիրո և կողմանի վաճառքի՝ այդ եպոխայում արդեն սկիզբ առած պրակտիկան («Նովելլա շների զրույցի մասին»), այդ բոլորը համարելով միանգամայն այլանդակ և մարդու բնական ինքնորոշմանը հակասող յերեվույթներ: Հետեւելով պիկարոյական նովելլային, Սերվանտեսը նկարագրում ե «նազդ փողի» թագավորությունը, վորտեղ մարդկային բոլոր արժեքները դարձել են առ ու ծախի առարկա («Թիկրնետե և կորտագիլիո», «Նովելլա շների զրույցի մասին») և վորտեղ փողը դարձել ե բոլոր մարդկային արժեքների չափանիշը:

Սերվանտեսի նովելլաների ամենաեյական առանձնահատկություններից մեկն ել հումանիստական իդեալների և գոյություն ունեցող բութուական կարգերի տարածայնությունների ցուցադրությունն ե: Այստեղից ել բղխում ե այն յերկվությունը, վոր առհասարակ հատկանշական ե նրա բոլոր նովելլաներին. նրա բոլոր նովելլաներն ունեն յերկու պլան, յերկու ֆարուկ ու սյուժետ: Այդ յերկվությամբ տառապում են նույնիսկ նրա հերոսները: Նրանք միաժամանակ ապրում են յերկու կյանքով, յերկու աշխարհում—իդեալական-հումանիստական և սեալ կյանքում, վորը շարժվում ու զեկավարվում ե բոլորովին այլ որենքներով:

Սերվանտեսի նովելլաների այս առանձնահատկությանը ծանո-

թանալու համար վերցնենք նրա լավագույն նովելլաներից մեկը—
«Բարեծնունդ տամանվածութին»:

Այստեղ պատկերացված ե, թե ինչպես յերկու յերիտասարդ
կաբալյերո՞ւ դոն Դիեգո դե Կարրիտառն և դոն Թոմաս դե Ավեն-
դանիոն, թողնելով իրենց ծնողներին և ընտանիքը, հագուստները
փոխելով, իրենց նվիրում են պիկարոյական արկածախնդիր
կյանքին: Քաղաքից քաղաք թափառելու ժամանակ նրանք մի
պանդոկում հանդիպում են «բարեծնունդ ամանվացունուն»—
կոստանսային:

Կոստանսայի չնաշխարհիկ գեղեցկությունը և առաքինու-
թյունը կախարդում են յերիտասարդներից մեկին՝ Թոմասին: Կոստանսային ավելի մոտիկից ճանաչելու և նրա սերը նվաճելու
նվատակով՝ Թոմասը վորոշում է ծառայության մտնել պանդո-
կում: Թոմասը պանդոկատիրոջ մոտ ընդունվում է բատրակի
պաշտոնով իսկ Դիեգոն՝ ջրկերի:

Յերբ Դիեգոն ծաղրում է ընկերոջ սերը, նկատի ունենալով
կոստանսայի ցածր ծագումը և ամանվացունու «ստոր» պաշ-
տոնը, Թոմասը պատասխանում է. «Նա ծառայում է պան-
դոկում, յես այդ չեմ թագցնում, բայց ասա ինձ, ի՞նչ կարող եմ
յես անել յերբ զգում եմ, թե ինչպես ճակատագրի դադտնի ուժը
գրավում է, իսկ գիտակցաբար կատարած ընտրությունը նույն-
իսկ ստիպում է նրան աստվածացներ: Յես ի վիճակի չեմ բա-
ցատրել, թե վճռ չափով սերը բարձրացնում և մեծացնում է
նրա, ինչպես դու յես անվանում, արհամարհելի ամանվացունու
կոչումը: Յերբ յես մի ակնթարթ նայում եմ նրա, վորքան ել
տարրորինակ թվա, ստորացուցիչ կոչման վրա, հենց նույն բոպե-
յին այդ միտքը անհետանում է նրա գեղեցկության և համես-
տության առաջ: Անմիջապես յերելում է, վոր այդ կոպիտ կեղե-
տակ թագնված է իր արժեքով շատ մեծ բան:

Մի խոսքով, ինչ ել վոր լինի, յես նրան ուժգին սիրում եմ,
բայց վոչ այն միջակ, սովորական սիրով, վորով առաջ սիրում
եյք ուրիշներին. այժմ իմ սերն այնքան անդիմաղբելի յե, վոր
չիտի այլ ցանկություն, բացի նրան ծառայելուց և այն վիճա-
կին համնելուց, վոր կոստանսան նույնպես ինձ սիրի և պատա-
խանի այն մաքուր սիրով, ինչպիսին իմ սերն ե»:

Թոմասը կոստանսայի սերը շահելու համար դիմում է բո-
լոր միջոցներին, նա նույնիսկ հայտնում է նրան իր բարձր ծագ-


ման մասին և այն մասին, վոր ինքը նրա համար և հագուստա-
ները փոխել և բատրակ դարձել բայց կոստանսան նրան դրա-
կան պատասխան չի տալիս:

Այս նովելլայի իդեալական-հումանիստական պլանն է: Հա-
րուսա աղնվականի վորդին սիրում և մի հասարակ ամանվացու-
չու. արհամարհելով դասային տարբերության բոլոր տրադիցիա-
ները, նա ցանկանում է ամուսնանալ նրա հետ: Բայց վերջում
պարզվում է, վոր կոստանսան վոչ թե հասարակ ծագում ունե-
ցող աղջիկ է, այլ ունի բարձր ծագում: Նա Թոմասի ընկերոջ
հոր և մի աղնվունու գաղտնի կապերի ծնունդ է: Կոստանսայի
մայրը «խայտառակությունը» ծածկելու համար նրան հանձնել ե
ծննդյան որից պանդոկապետին, վորի մոտ մեծացել է կոս-
տանսան, չիմանալով իր ծագման մասին: Այսպիսով Թոմասը
և կոստանսան ամուսնանում են վորպես միենույն դասի ներ-
կայացուցիչներ:

Այս նույն սկզբունքով գրված է նաև «Գնչուհի» նովելլան:
Հարուսա աղնվականի վորդի Դոն Խուանը սիրում և գնչուհի Պրե-
սուսային: Նրա հետ ամուսնանալու նվատակով, դարձյալ թողնե-
լով ամեն ինչ, դառնում է գնչու: Նրանց ամուսնությունը՝ տեղի
ունենում միայն այն ժամանակ, յերբ անսպասելիունն պարզ-
վում է, վոր Պրեսոսան նույնպես բարձր ծագում ունի: Նրան
փոքր հասակից գողացել և ծեր գնչուհին և դաստիարակել ե իր
մոտ, բոլորին հավատացնելով, թե իր թոռն է: Դժվար չի նկա-
տել վոր այստեղ նույնպես մենք գործ ունենք յերկու պլանի
հետ: Բարձր ծագում ունեցող աղնվականի և հասարակ գնչունու
փոխադարձ սիրո պատմությունը—այս մի պլանն է: Բայց մյուս
կողմից նրանց ամուսնությունը դառնում է հնարավոր, յերբ
պարզվում է, վոր նրանք յերկուսն ել հավասար դիրքի և հավա-
սար աստիճանի մարդկանց զավակներ են:

Թվում է, թե յերկու գեղգում ել Սերվանտեսը վորպես հու-
մանիստ պետք ե ընտրել այլ լրտես և այլ վերջավորություն: Առնվազն կոստանսան մինչև վերջը պետք ե մնար ամանվացու-
հի, իսկ Պրեսոսան (նրա խկանան անունը նույնպես կոստանս-
ս)՝ գնչուհի. այս գեղգում մենք գործ կունենայինք կատարյալ
հումանիստական լուծման հետ:

Բայց ինդիրն այն է, վոր այս գեղգում այդ կլիներ վոչ
ենալիստական, այլ ցանկալի լրտես: Վոր Սերվանտեսը



իդեալական-հումանիստական պլանի կողմանակից ե, այդ բանում դժվար չե համոզիլ:

Թոմասի ընկերը իր հորը պատմում ե, վոր Թոմասը այնքան ուժեղ է սիրում Կոստանտինյային, վոր յեթե նույնիսկ չպարզվեր, վոր նա Դոն Դիեգոյի աղջիկն ե, միևնույն ե, նա կառուսնանար Կոստանտինյայի հետ, նկատի չառնելով, վոր նա հասարակ ամանլվացուհի յե¹: Նույն բանը կարեի յե ասել նաև Դոն Խուանի մասին: Բայց Սերվանտեսը նկատում ե, վոր հումանիզմը ուեալ իրականության զարգացման հիմնական որենքը չե, վոր իրականությունը շարժվում ե իր սեփական որենքներով:

Լավ կլիներ, իհարկե, յեթե Թոմասը ամուսնանար աղախնի հետ, իսկ Դոն Խուանը՝ գնչուհու: Բայց ինչ կարող եր անել Սերվանտեսը, յերբ այդ տիպի ամուսնությունը գոյություն ունեցող կարգերի պայմաններում տիպական յերեվայր չեր, յերբ ամուսնության մեջ ուեալ կյանքում վճռական ձայնը պատկանում եր նյութական նկատառություններին: Միայն փոխադարձ սիրո և հարգանքի հետեվանքով տեղի ունեցող ամուսնությունը Սերվանտեսի մոտ մնում ե վորպես պլան, չիրագարծված իդեալ, հաղթանակը պատկանում ե ուեալ պլանին: Դժվար չե նկատել վոր այդ լուծման մեջ պատկերացված ե հումանիստական իդեալի և ուեալիստականության տարածայնությունները, նրանց անհամապատասխանությունը և աններգաշնակությունը:

Առհասարակ Սերվանտեսի նովիլլաները աչքի յեն ընկնում այդպիսի հանկարծակի, առաջին հայացքից չպատճառաբանված և զայրացնող լուծումով: Զպատճառաբանվածը, անիմաստը և զայրացնողը ուեալ պլանի հաղթանակն ե—ահա այդ տիպի բոլոր լուծումների իմաստը: Այդ լուծման մեջ միաժամանակ արտահայտվում ե Սերվանտեսի խորին զայրույթը և մտրակող իրոնիան գոյություն ունեցող կարգերի նկատմամբ:

«Խաբեյական տմօւնություն» նովիլլայում Սերվանտեսը տալիս ե «նազդ փողի» հաշիվների վրա կառուցված ընտանիքի նկարգրությունը: Կամպուսանոն ամուսնում ե դոննա Եստեֆանիայի հետ՝ նկատի ունենալով բացառապես նրա ոժիւթը, վորի արժեքը յերկու հազար հինգ հարյուրից անցնում ե: Բայց հետո պարզվում ե, վոր այդ ոժիւթը Եստեֆանիային չի պատկա-

1. Серантес «Назидательные но веллы», Т. II, стр. 32

նում: Նրա ընկերուհին իր ամբողջ ընակարանը ժամանակությապես հանձնելով Եստեֆանիային, գնացել ե մի այլ քաղաք:

Ոգավելով հանգամանքից, Եստեֆանիան ընկերուհու ունեցվածքը ներկայացնում ե վորպես իր ոժիւթ, մտածելով, վոր ամուսնանալուց հետո նա կարող ե արդարանալ իր ամուսնու առաջ:

Բայց ինդիբն այն ե, վոր Կամպուսանոն նույնպես խաբել ե կնոջը: Նա Եստեֆանիային հավատացնում ե, վոր իր ունեցած թանգարժեք շղթայի և այլ իրերի արժեքը յերկու հազար դուրկատից բարձր ե: Բայց հետո, յերբ Եստեֆանիան գողանալով այդ շղթան անհետանում ե, Կամպուսանոն ստիպված խոստովանում ե, վոր այդ շղթան վոսկուց չեր, այլ կեղծ եր և առանձին արժեք չունի:

Այսպիսով վերջում պարզվում ե, վոր Նրանցից ամեն մեկը փորձել ե խաբել մյուսին և ապրել մյուսի հաշվին, բայց այդ ամուսնությունը վերջանում ե նրանով, վոր, ինչպես ասում ե ժողովրդական առածը, «Գողը-գողից գողացավ, աստված վերեվից զարմացավ:» Այս առածով ել Սերվանտեսը յերրափակում ե իր նովիլլան:

Կարելի յե բերել բաղմաթիվ այլ որինակներ ցույց տալու համար, վոր «Խերատական նովիլլաների» հակաֆեռդալական սատիրայի հետեվում թագնված ե հակակալիքալիստական սատիրա, վոր Սերվանտեսի համար հավասար չափով ընդունելի չեն վհչ ֆեռդալական կարգերը և վհչ ել «նազդ-փողի» պրակտիկան:

Սերվանտեսի նովիլլաների մեջ առանձին հետաքրքրություն ե ներկայացնում «Լիցենցիա Վիլգրիերա» նովիլլան, վորը հանդիսանում ե Դոն Կիխոտի խելագարության իմաստը հասկանալու լավագույն բանալին: Կարելի յե նույնիսկ պնդել վոր այս նովիլլան մի փոքրիկ «Դոն Կիխոտ» ե, վորովհետև այն պրակտիմները, վոր ավելի գրանդիոզ չափերով քննության են առնվում վեպւմ, շոշափվում են նաև նովիլլայում ավելի նեղ և ավելի ընդհանուր սահմաններում:

Առհասարակ պետք ե նկատել վոր խելագարության պրոբլեմը այդ գարաշընանի խապանական գրականության ամենասիրած թեմաներից մեկն եր:

Սերվանտեսի նովիլլայում խելագարությունը հանդես ե զալիս վորպես գոյություն ունեցող կարգերի մերկացման հզորագույն միջոցներից մեկը:

Թոմաս Ռողախը,՝նովելլայի կենտրոնական հերոսը, մի հասարակ գյուղացու վորդի յե: Նա ստանում է բարձրագույն կըրթություն, լինում է հատակայում, ծանոթանում է Սնտիկ Աշխարհի կուլտուրային և գրականությանը: Վերադառնալով հայրենիք, խելագարվում ե: Խելագարությունը արտահայտվում է բացառապես այն տարորինակ հասկացողության մեջ, վոր ինքը ապակուց ե և ամեն քայլափոխում կարող ե փշրվել: Իսկ մյուս բոլոր գեպքերում նրա խելագարությունը նման է Համետի խելագարությանը, վորի մասին Պոլանիուսը ասում է, թե նրա խելագարության մեջ մերօդ կա: Խնդիրն այն ե, վոր Ռողախը, վոր այժմ իրեն անվանում ե Լիցենցիատ Վիդրիերա, իրեն տված բոլոր հարցերին պատասխանում ե վերին աստիճանի խորիս մասու գատողություններով: Նա մերկացնում ե իր ժամանակի իսպանական կյանքի բոլոր այլանդակությունները, ազնվականությունը, հոգեվորականության շառաւանությունը, դատավորների կաշռակերությունը, վաճառականների մեքենայությունները:

Հետաքրքիր ե նշել, վոր Դոն Կիխոտի նման Ռողախն ել վերջում առողջանում ե, բայց այժմ նորմալ վիճակում այդ վերին աստիճանի ընդունակ և տաղանդավոր մարդը դուծություն վոչ մի ասպարեզ չի գտնում:

«Տեսնելով, վոր շուտով քաղցից մեռնելու յե, նա վորոշեց թողնել մայրաքաղաքը—(Մակրիդը—Հ. Մ.) գնալ Ֆլանդրիա և այնտեղ գործադրել իր մարմնական ուժերը, քանի վոր նրա տաղանդը այստեղ վոչ վոքի պետք չեկավ»:

Յեկ հեղինակն իր հերոսի հետ միասին գիմելով մայրաքաղաքին, բացականչում ե, «Ո՞ մայրաքաղաք, մայրաքաղաք: Դու փայփայում ե յերես ես տալիս ստոր և պնդերես մուրացիկներին և կործանում ես արժանավոր ու համեստ մարդկանց: Դու առատորեն կերակրում ես անամոթ խեղկատակներին և սովաման անում խելոք մարդկանց»:

Այս խոսքերով մայրաքաղաքին գիմող գըողը չեր կարող դժգոհ չիմել գոյություն ունեցող կարգերից:

Սերվանտեսի ինչպես դժգոհությունը, այնպես ել ըմբռուտացումը տիրող կարգերի գեմ ցայտուն կերպով արտահայտվել ե նրա «Դոն Կիխոտում»:

III.

Սերվանտեսի գրական ժաւանգության մեջ առանձնահատուկ տեղ ե գրավում նրա «Դոն Կիխոտը», վորը հանդիսանում ե վոչ միայն Վերածնության դարաշրջանի, այլև համաշխարհային գրականության ամենափայլուն հուշարձաններից մեկը: Սրանով պետք ե բացատրել այն չտեսնված հետաքրքրությունը, վոր առաջացրել և այդ վեպը քննադատների, փիլիսոփաների և գրողների լայն շրջաններում: Մի քանի դարերի ընթացքում ստեղծվել ե մի հսկայական գրականություն այդ վեպի շուրջը: Սերվանտեսի վեպի ուսումնասիրողների թվում հանդիպում ենք այնպիսի նշանավոր անունների, ինչպիսիք են Բուտերվեկը, Միսմոնդին, Ամագոր գեղ-լու Ռիսու, Պրեսկոտերը, Տիկնորը, Փիլիսոփաներից՝ Շելինգը, Հեգելը, գրողներից՝ Բայրոնը, Գյոթեն, Ռուրդագորտը, Հայնեն, Վիկտոր Հյուգոն, Տուրգենևիչը: Ելաչեմ խոսում Բելինսկու մասին, վորը տվել ե Դոն Կիխոտի տիպի ամենափայլուն բնութագիրը: «Դոն Կիխոտով» հետաքրքրվել են նաև Մարքսիզմի կամացական կատարած աշխատանքի գրական նվաճումները:

«Դոն Կիխոտի ամենահին և միաժամանակ ամենատարածված բացատրություններից մեկը յեղել է այն, վոր այդ գործը դիտվել ե վորպես գրական պարողիա՝ ուղղված ասպետական վեպերի գեմ:

Այս մեկնաբանությանը նպաստել ե յերկու հանգամանք: Նախ այն, վոր այդ գարաշրջանի հսպանիան յեղել և ասպետական վեպերի կլասիկ յերկիր և հետո այն, վոր ինքը Սերվանտեսը նույնպես իր վեպում վորոշակիորեն հայտնում ե, վոր իր նպատակն ե յեղել բուռն ատելություն առաջացնել ընթերցողների մեջ գեպի ասպետական վեպերի կեղծ և անմիտ պատմությունները¹:

Իհարկե ճիշտ ե, վոր ասպետական վեպերը չտեսնված թափով տարածվեցին հսպանիայում: Կնոջը, «սրտի դիցուհուն» ծառայելու ասպետական սկզբունքով թափանցված եյին վոչ միայն հսպանական ոռմանսների մի գգալի մասը, այլև զանազան հրատարակված որենքները: Այսպես, որինակ, Ալֆոնս Իմաստունի հայտնի որենքների գրքում, վորը վերաբերում

^{1.} Տես յերկրորդ մասի առաջաբանը:

և XIII դարին, այն գլխում, վորտեղ շարադրված են ասպետների պարտականությունները, ասվում ե, վորտապետը մենամարտից առաջ պետք ե տա իր սրտի դիցուհու անունը:

Վորպես կնոջը ծառայելու ասպետական սկզբունքի կլասիկ որինակ սովորաբար բերում են գերմանական միննենդինգեր Ռուրիի ֆոն Լիխտենշտեյնի և տրուբագուր Պյեր Վիդալի արշականքից Սրանցից առաջինը հագնելով սիրո աստվածունու հագուստներ, Բոնեմիայից գնում ե մինչև Վենետիկ, ճանապարհին մենամարտի կանչելով այն բոլոր մարդկանց, ով չեր համաձայն վում նրա հետ այն մասին, վոր իր սրտի դիցունին ամենագեղցիկն ե աշխարհում: Իսկ Պյեր Վիդալը, ցանկանալով ուրախացնել իր սրտի դիցունուն, հագնում ե գայլի մորթի և ներկայանում ե նրան: Սրտի դիցունու շները քիչ եր մնում, վոր հոշոտեյին նրան: Բայց յեթե այսպիսի անմիտ արկածներ մյուս յերկրներում յեպակի յերեխույթներ եյին, ապա իսպանիայում դառնում են մասսայական:

XV դարի իսպանական քրոնիկներից մեկում պատմվում ե մի վոժն Սուենո-դե-Կինոնեսսե ասպետի մասին, վորը սրտի ընտրյալին ծառայելու համար հնարում ե մի վերին աստիճանի կուրյոզային միջոց: Նա շաբաթվա ընթացքում ծոս եր պահում, կեսը ի պատիվ սրտի դիցունու, իսկ կեսը ինչ վոր սրբի, ըստ վորում հինգշաբթի որը նա վզից կախում եր մի ծանր շղթա, վորպես ճորտության սկմվով դարձյալ ի պատիվ սրտի դիցունու: Այսուհետեւ նա մի քանի ընկերների հետ միասին կանգնում ե մի կամրջի մոտ յերեսուն որ անընդհատ և մենամարտի յե կանչում այդտեղով անցնող բոլոր ասպետներին, դարձյալ ի պատիվ իր սրտի դիցունու: Հետաքրքիր ե, վոր նրա այս «քաշագործությունների» ժամանակ սիստեմատիկորեն ներկա յեր լինում Խուան Զ-րդ թագավորը: Նույն դարի վերջին կաստիլական ասպետներից մեկը գնում ե Անգլիա Հենրիի VI-ի պալատը, անգլիական ասպետներին մենամարտի կանչելու նպատակով, դարձյալ ի պատիվ իր սրտի դիցունու:

Ասպետական այս անմիտ «քաշագործությունները» իդեալականացվում եյին ասպետական վեպերում: Այդ վեպերի մեջ ամենից

շատ տարածված եր փորթուգալական ասպետական վեպերից մեկը՝ «Ամաղիս Գալիացի», վորը գրված եր «կոր սեղանի» ասպետական վեպերի վոգով և վորը հսպանիայում վերամշակվեց XV դարեվիրջին: Այս վեպը մեծ հաջողություն ունեցավ իսպանիայում, իսկ Սերվանտեսի ժամանակ գոյություն ուներ այդ վեպի մի ամբողջ ցիկլ, վորը հայտնի յե Ամաղիսների ցիկլ անունով:

Այս պայմաններում միանգամայն հասկանալի յե, թե ինչու Սերվանտեսը իրեն նպատակ եր դրել ջախջախիչ քննադատության յենթարկել ասպետական վեպերը:

Բայց, այնուամենայնիվ, այս մեկնաբանությունն արդեն չեր բավարարում սերվանտեսագետների վորոց մասին:

Նրանք հասկանում եյին, վոր «Դոն Կիխոտի» իմաստը չի սպառվում միայն ասպետական վեպերի քննադատությամբ, վոր «Դոն Կիխոտը» չի կարելի դիտել վորպես միայն գրական պարողիա՝ ուղղված ասպետական վեպերի դեմ:

Հետագա քայլը «Դոն Կիխոտի» մեկնաբանության մեջ յեղավ այն, վոր վեպը սկսեցին համարել մի պամֆլետ՝ ուղղված այն ժամանակի մի շարք պետական քաղաքականության դեմ:

Այսպես, որինակ Դոն Կիխոտի պայքարը վոչխարի հոտե գեմ համարում եյին մի սատիրա, վորն ուղղված ե իսպանական միավետության նվազողական քաղաքականության դեմ:

Դոն-Կիխոտի արշավանքը գինու տկերի գեմ համարում եյին կծու ակնարկ Կարլոս V-ի հասցեյին: Սերվանտեսագետներից մեկը (Մորել Ֆասիո) Դոն Կիխոտին նույնիսկ համեմատում ե Ֆիլիպպ II-ի հետ. «Զկա արդյոք Ֆիլիպպ II-ի ժանտապիհի մեջ վորմե մի բան, վոր հիշեցնի Դոն Կիխոտին և Սանչոյի կույր դյուրահավատությունը: Թագավորի հողմաղացները հերետիկոսներն եյին. նա հերետիկոսներին տեսնում եր ամեն տեղ և հավատացնում եր իրեն, թե կարող ե վոչչացնել մինչև վերջին մարդը: Յեղել են նաև այլ սերվանտեսագետներ, վորոնք անդել են, թե Սանչոն պարողիա յե գուքս Լերմի քարտուղարի հասցեյին, վոր Սանչո գավառապետի նախատիպը յեղել ե սեպիլյան գավառապետը: Իսկ Դեֆոն պնդում եր, թե Սերվանտեսը «Դոն

Կիխոտում» ծաղրել և «Հաղթական Արմադայի» հրամանատար դուքս Մեդինս Սիդոնին:

Վորքան ել ձիշտ լինեն այս դիտողությունները, այնուամենայնիվ այսոր մեզ համար պարզ ե մի բան, վոր Սերվանտեսի վեպի իմաստը և արժեքը պետք ե տեսնել վոչ թէ պատմական առանձին փաստերի և անձերի ձիշտ վերաբարության մեջ, այլ այն փաստի մեջ, վոր նա իր վեպում տվել ե այդ ժամանակի իսպանական կյանքի ընդհանուր նկարագրությունը և քննադատությունը:

Սերվանտեսագիտության կատարած հետագա քայլը յեղել ե այն, վոր աշխատել են վեպին տալ փելիսոփայական մեկնաբանություն։ Այս ուղղությամբ առաջին անգամ գնաց Բուտերվեկը։

Նա առաջինն եր, վոր նկատեց, թե «Դոն Կիխոտի» եյությունը չի սպառվում ասպետական վեպերի քննադատությամբ։ Նրա կարծիքով Սերվանտեսը հետապնդել ե ավելի բարձր նպատակ, նա աշխատել ե տալ մարդկության բարեկամ ենտուղիաստի տիպը, վորը լցված է մեծագույն սիրով ու հարգանքով դեպի այն ամենը, ինչ վոր բարձր ե և ազնիվ։ Գերմանական ոռմանտիզմի տեսաբաններից մեկը՝ Ավգուստ Շլեկելը՝ շարունակելով և խորացնելով այդ մեկնաբանությունը, գտնում եր, վոր Սերվանտեսի վեպի եյությունը բանաստեղծական բարձր ենտուղիազմի, վորի մարմնացումը Դոն Կիխոտն ե, և պրոզայի կոնտրաստն ե (պրոզան նրա կարծիքով Սանչոն ե)։

Այս նույն միտքը պաշտպանում ե նաև Սիսմոնդին։ Նրա կարծիքով Դոն-Կիխոտի հիմնական ինդիքն ե պատկերացնել պոեզիայի և պրոզայի հավիտենական կոնտրաստը մարդկային կյանքում։ Նրա համար Դոն-Կիխոտը դրական տիպ ե, ազնիվ, մեծահոգի, իդեալներին անսահմանորեն նվիրված և անշահմանդիր։ Բայց ամբողջ հարցը Սիսմոնդիի կարծիքով այն ե, վոր այդ ազնիվ մարդու բարձր նպատակների իրագործման բոլոր փորձերը վերջանում են անհաջողությամբ և դառնում են չարիք մյուսների համար։ «Ահա թե ինչու, — ասում ե Սիսմոնդին, — «Դոն Կիխոտը» համարվում ե ամենատիտուր գրքերից մեկը, վորովհետև նրանից հետեւող բարոյախնոսությունը վերին աստիճանի տիպուր ե»։

Վերին աստիճանի հետաքրքիր ե նաև Հեղելի տեսակետը.

«Այն բանից հետո (ֆեոդալիզմի քայլքայումից հետո—Հ. Մ.), յերբ որինակարգը իր պրոզայիկ ձեվով հասավ ավելի բարձր զարգացման և զարձակ իշխող, արկածներ վորոնող ասպետների անհատական ինքնուրույնությունը կորցնում ե իր նշանակությունը, և յեթե նա շարունակում ե իրեն համարել միակ կարեվորը և կովում ե ասպետության իմաստով անարդարությունների գեմ, ոգնելով ճնշվածներին, ապա նա դառնում ե ծիծաղելի։ Սերվանտույան Դոն Կիխոտի կոմիզն այս ե»։

Շելլինգը գտնում էր, վոր «Դոն Կիխոտի» հիմնական պրոբլեմը իդեալի և իրականության հակադրությունների ցուցադրությունն ե»։

XIX դարի գրեթե բոլոր խոշոր գրողները, բացառությամբ Դյութեյի, Դոն Կիխոտին համարում են դրական տիպ և մեծ մասմբ մեղադրում են Սերվանտեսին, վոր նա ծաղրել ե այդ ազնիվ մարդուն։

«Իմ կարգացած բոլոր գրքերի մեջ,— գրում ե Բայրոնը, — «Դոն Կիխոտը» ամենատիտուր վեպն ե և տիպուր ե հենց նրանով, վոր նա մեր մեջ ժպիտ ե առաջացնում։ Նրա հերոսը միանդամայն իրավացի յե, նա ձգտում ե ձգմարտության, նրա նպատակն ե պատժել չարերին և պայքարել ուժեղների գեմ, թույլերի համար։ Խելագարությունը նրա առաքինության մեջ ե, բայց այնուամենայնիվ նրա արկածները ունենում են տիպուր վախճան և ավելի տիպուր ե այն բարոյական դասը, վոր բղխում ե այդ իսկապես վոր եպիկական պոեմից։ Ըմբռուտանալ անարդարությունների գեմ, ոգնել թույլերին, վրեժինդիր լինել նրանց վիրավորանքների համար և պատժել չարամիտաներին—միթե այս առաքինի նպատակները պետք ե վերագրվեն մեր Փանտազիայի անպատուղ մտորումներին։

Միթե բոլոր խոչընդոտաները հաղթահարելը և այդ ճանապարհով փառքի ձգտելը պետք ե դառնա ծաղրի առարկա։ Յեվ ինչ ե Սոկրատեսը, յեթե վոչ մի իմաստուն Դոն Կիխոտ։ Սերվանտեսը իր ծիծաղով հապանիայում վերջ գրեց ասպետությանը... վեպի հաջողությունը ձեռք բերվեց իր յերկրի բարոյական անկաման գնով» («Դոն Շուան», յերգ XPI)։

Վ. Հյուգոն գտնում ե, վոր Սերվանտեսը ծաղրել ե Դոն Կիխոտին և նրա իդեալների իրագործումը համարում ե անհնար, բայց Սերվանտեսը Դոն Կիխոտի կողմն ե, ինչպես Մոլիերը՝ Ալեսուտի։

«Դոն Կիխոտի» ամենափայլուն մեկնաբանությանը հանդիպում էնք նաև Հայնեյի մոտ: Հայնեյի համար նույնպես ինչպես Դոն Կիխոտը, այնպես ել Սանչոն գրական տիպեր են: Բայց Հայնեյի բերած նորությունը սերվանտեսագիտության մեջ այն եր, վոր նա առաջին անգամ նշեց այն փաստը, թե Դոն Կիխոտը և Սանչոն վոչ միայն հակագրություններ են, այլև փոխադարձաբար լրացնում են իրար: Բացի այդ, Հայնեն շեշտը դում և Սերվանտեսի գեմոկրատիզմի վրա և Սանչոյին համարում և նրա գեմոկրատիզմի լավագույն արտահայտություններից մեկը:

Ուստական իրականության մեջ կարեվոր յերեվույթ և համարվում Տուրքենեվի հոչակավոր ճառը՝ «Համլետ և Դոն Կիխոտ»:

Համաշխարհային գրականության այս յերկու մոնումենտալ կերպարների համեմատական բնութագրման միջոցով Տուրքենեը վեր և հանում Դոն Կիխոտի մի շարք եյական գծեր: Դոն Կիխոտին նա համարում ե գրական տիպ, մեծագույն ենտուղիաստ և բարձր գաղափարների ներկայացուցիչ: Դոն Կիխոտի եյական գիծը, նրա կարծիքով, գաղափարներին անսահմանորեն նվիրված լինելն ե, վորոնց համար նա պատրաստ ե իրեն յենթարկել բոլոր հնարավոր զրկանքների և նույնիսկ զոհել կյանքը: Կյանքը նա գնահատում և այն չափով, վոր չափով նա կարող ե ծառայել վորպես այդ իդեալները իրագործելու միջոց, վորպես ճշմարտության և արդարության տարածման ասպարեզ: Ասպել իր համար և մտածել միայն իր մասին—այս սկզբունքը Դոն-Կիխոտը կհամարեր ամենաամոթաբեր և ստոր սկզբունքը: Նա ապրում ե իրենից դուրս ուրիշների համար, իր յեղբայրների համար, մարդկության թշնամական ուժերին հակագրվելու համար:

Ուստական նախախորհրդային քննադատության մեջ Դոն Կիխոտի տիպի ամենակասիկ բնութագիրը տվել ե Բելինսկին: «Դոն Կիխոտը ամենից առաջ հիմնալի և աղնիլ մարդ ե, ճշմարիտ ասպետ, անվեհեր և աննախատինք: Զնայած, վոր նա ծիծաղելի յե վոտքից մինչև գլուխ, ներսից և արտաքինից, բայց նա վոչ միայն հիմար չե, ընդհակառակը, շատ խելոք ե, բացի այդ նա ճշմարիտ իմաստուն ե: Գուցե նրա բնավորությունն ե այդպես, կամ գուցե նրա դաստիարակության հետեւ վանք ե, վոր նրա մոտ Փանտազիան իշխում ե նրա բոլոր ընդունակությունների վրա և գարձրել ե նրան մարդկարիան և դարերի ծաղրածուն ու ծաղրաղը: Ասպետական անմիտ հեքիաթների ընթեր-

յանության հետևանքով, ոռւսական առածի ասած, ոմ զա բազմ զաշել: Ապրելով յերազների մեջ, ապրելով իր ժամանակակից իրականությունից զուրս, նա զրկվում ե իրականության ամեն մի տակտից և վորոշում ե դատնալ ասպետ այնպիսի ժամանակ, յերբ յերկը յերեսին չեր մնացել վոչ մի ասպետ, և նա սրբությամբ իրագործում ե իր միսիան,—պաշտպանել թույլերին ուժեղ ների դեմ,—մնում ե հավատարիմ իր յերեվակայական Դուցինեային, չնայած այն բոլոր դաժան հուսախարություններին, վոր յենթարկում ե նրան բոլորովին ել վոչ ասպետական իրականությունը:

Յեթե այդ քաջությունը այդ հերոսությունը, այդ մեծանոգությունն ու նվիրվածությունը, այդ բոլոր հիմնալի և բարձր հատկությունները իրապես տեղին և ժամանակին գործադրվելին, Դոն Կիխոտը կլիներ իրապես մեծ մարդ: Բայց նրա առանձնահատկությունը հենց այն ե, վոր նրա բնավորությունը պարագոքային ե, վոր նա իրականությունը չի տեսնում իր իրական գեմքով ու չի գործադրում իր սրտի մեծագույն գանձերը տեղին և ժամանակին: Յեթե նա ծնվեր ասպետության զբանում, նա յերեվի կձգտեր ասպետության վոչնչացմանը, յեթե նա ծանոթ լիներ հին աշխարհի հետ, նա յերեվի իրեն կներկայացներ վորպես հույն կամ հոռմայեցի: Բայց չնայած ասպետության հետքերն անդամ չկային յերբ նա ծնվեց, ասպետությունը դարձավ նրա խելագարության կետը և իդեալ ֆիքսը: Յերբ նա մի վայրկյան գուրս ե գալիս այդ շրջանից, նա բոլորին զարմացնում ե իր մտքով, առողջ դատողությամբ, խոսում ե վորպես իմաստուն: Յեկ այնուամենայիլ նա խելագար ե, ծաղրածու, մարդկանց ծիծաղի առարկա»:

Խորհրդային սերվանտեսագիտության մեջ նկատվում ե յերեք հիմնական տեսակետ «Դոն Կիխոտի» և առհասարակ Սերվանտեսի մասին:

Վոմանք «Դոն Կիխոտը» համարել են բացառապես հակաֆեողական սատիրա: Մահացող ֆեողակիզմը սրանց կարծիքով ծաղրված ե Դոն Կիխոտի կերպարի միջոցով, Դոն-Կիխոտը բացառական տիպ ե: Քննադատելով և բացառելով ֆեողակիզմը, Սերվանտեսն իրերել թե պայքարում ե կապիտալիզմի համար, իսկ կապիտալիստական պրոցեսի մարմացումը համարվում է սրանց մոտ Սանչոն (Բելիցի, Կելին, Գվոզգել):

Մյուսները Սերվանտեսին կապել են ազնվականության հետ՝

«Դոն Կիխոտը» համարելով հակակապիտալիստական սատիրա: Տխուր պատկերի ասպետը սրանց մոտ համարվել է ֆեոդալական աշխարհայցքի մարմացում և Սերվանտեսի իդեալական տիպ (Ֆրիչե, Նուսինով, Դերժավին):

Խորհրդային սերվանտեսագետների մյուս մասը «Դոն Կիխոտը» համարել եւ և՛ հակաֆեոդալական և՛ հակակապիտալիստական սատիրա: Մրանց կարծիքով (Կրժեվսկի, Ենգելբարտ, Բյուօւենֆելդ) Սերվանտեսի համար հավասար չափով անընդունելի յեւ և՛ գեոդալիզմը և՛ կապիտալիստական պրակտիկան, վոր Սերվանտեսն իր վեպի որյեկտիվ բովանդակությամբ կանգնած եւ լայն ժողովրդական-դեմոկրատական դիրքերի վրա: Շեշտը դնելով Սերվանտեսի դեմոկրատիզմի և ժողովրդայնության վրա, սրանք տալիս են Դոն Կիխոտի և Սանչոյի կերպարներին բոլորովին նոր մեկնաբանություն, հաղթահարելով այն ծայրահեղ կարծիք-ները, վոր գոյություն են ունեցել այդ կերպարների մասին:

IV.

Սերվանտեսին բուրժուազիայի և ազնվականության հետ կապող խորհրդային սերվանտեսագետները կատարել են այն դրական աշխատանքը, վոր Սերվանտեսի վեպից վեր են հանել բազմաթիվ փաստեր՝ ճեղինակի հակաբուրժուական կամ հակաֆեոդալական տենդենցները հիմնավորելու համար: Բայց նրանց հիմնական սխալը յեղել են այն, վոր չեն կարողացել ճիշտ կողմուրոշվել այդ փաստերի մեջ: Ճշմարտությունն այն ե, վոր «Դոն Կիխոտի» մեջ թե ֆեոդալիզմի և թե կապիտալիզմի դեմ ուղղղված փաստերը հավասար չափով շատ են և վոր, հետեվապես, Սերվանտեսի սատիրան ունի յերկու որյեկտ, վոր նրա համար ընդունելի չե վնչ կործանվող ֆեոդալիզմը և վնչ ել «նազդ փողի» պրակտիկան:

Դեռևս նախախորհրդային սերվանտեսագետներն են ապացուցել, վոր տխուր պատկերի ասպետի գործունեյության համար վորպես ասպարեզ Սերվանտեսն ընտրել եւ քաղաքացիական հասարակությունը, բուրժուական հասարակությունը: Այս իմաստով «Դոն Կիխոտը» ամենից առաջ ֆեոդալական մտածողության հանդիպումն և բուրժուական իրականության հետ, բայց մի այնպիսի բաղխում, վորի ժամանակ դրսեվորվում ե վոչ միայն ֆեո-

դալական-ասպետական մտածողության վողջ անիմաստությունն ու ծիծաղելի լինելը, այլև միաժամանակ բացասական գնահատական ե տրվում բուրժուական կարգերին: Վեպի ամբողջ խորիմաստությունն այն ե, վոր ծաղրվում ե վոչ միայն Դոն Կիխոտի պայքարի ասպետական մեթոդները, այլև նրա վողջ գործունեյությունը վարկաբեկում ե բուրժուական կարգերը, ամեն քայլափոխում դրսեվորելով, վոր այդ կարգերում գոյություն չունի վոչ ճշմարտություն, վոչ արդարությունն և վոչ ել առնասարակ այն ամենը, ինչի համար պայքարում ե ախուր պատկերի ասպետը:

Այս պատճառով ել ճիշտ են այն սերվանտեսագետները, վորոնք պնդում են, թե «Դոն Կիխոտի» հակաֆեոդալական սատիրայի յետելում թագնված ե հակակապիտալիստական սատիրա, վոր նրա վողջ գործունեյության նպատակը վերջիվերջո ուղղված ե կապիտալիզմի դեմ:

Իելնակին անպայման իրավացի յեր, յերբ Դոն Կիխոտի մեջ տեսնում եր գրական արժանիքներ: Դոն Կիխոտը վոգեհնչված ե ամենալավագույն նպատակներով: Նա ցանկանում ե պաշտպանել ճնշվածներին, նա ձգտում ե յերկրի յերեսից վերացնել բըռ-նությունն ու անսարդարությունը, նա ձգտում ե յերկրի յերեսին հաստատել ճշմարտության և ազատության թագավորությունը: Իր այս հասարակական բարձր և վերին աստիճանի աղնիվ գաղափարները իրագործելու համար, նա հանդես ե բերում հեքիաթային նվիրվածություն, անսահման անձնազոնության պատրաստակամություն, վոգու և կամքի այնպիսի անընկճելիություն և ամրություն, վոր հաճախ թվում ե անհավատալի: Իր ձգտումների աղնվությամբ, իր համոզունքների անկեղծությամբ և իր գործին անձնուրաց նվիրվածությամբ նա իսկական հերոս ե: Համաշխարհային գրականության մեջ դժվար ե նշել մի ուրիշ հերոս, վորն այդքան համառ հետեւղղականությամբ իր նպատակներն իրագործելու պատրաստակամություն հանդես բերեր: Նրա այս գիծը ապշեցնում ե մասնավանդ այն պատճառով, վոր նա յերեք հաջողություն չի ունենում և մշտապես պարտվում ե: Հողմաղացները վոչնչացնելու փոխարեն, նա ջարդում ե իր ճակատը, բոլորը նրա վրա ծիծաղում, ձեռ են առնում, յենթարկում են ամենածանր տանջանքների և փորձությունների: Դոն Կիխոտը այդ բոլորը վոչ միայն տանում ե հերոսարար, այլև

կամքի անասելի ուժով, այնպես և զսպում իրեն, վոր վոչ վոք
նրանից նույնիսկ տնքոց չի լի: Յեկ ամենակարեվորը՝ վոչ մի
դեպում Դոն Կիխոտը չի հուսահատվում, չի հրաժարվում
իր նպատակներից և համառորեն շարունակում և պայքարել
նրանց իրագործման համար:

Կյանքը վտանգի յենթարկելու և զոհելու այս պատրաստա-
կամությունը, հեքիաթային անկեղծությամբ իր գաղափարներին
նվիրված լինելը, անսասան կամքն ու հաղթանակի խորին հա-
վատը—այս բոլորն այնպիսի գծեր են, վոր վոչ մի դեպում չի
կարելի բացասական համարել: Ճիշտ ե, նրա մեջ կան վորոշ փա-
ռասիրության գծեր, բայց վերջիվերջո այդ բոլորը նա կատա-
րում ե վոչ թե միայն փառքի համար և միայն անուն հանելու
համար: Նրա նպատակները ավելի խորն են և լայն: Նրա մեջ
ավելի շատ մարդկայնություն կա, ավելի խոր և անմիջական
անկեղծություն ու մարդասիրություն և վերջիվերջո ավելի շատ
պարզություն ու ազնվություն, քան թե այն բոլոր մարդկանց
մոտ, վորոնց նա հանդիպում ե: Բայց Սանչոյից, վեպում չի կա-
րելի նշել մի մարդու, վոր իր մարդասիրությամբ և առաջինու-
թյուններով բարձր լինի Դոն Կիխոտից: Նա հանդիպում ե հա-
ղարավոր մարդկանց, վորոնց ճնշող մեծամասնությունը խար-
դախ ե, ստոր, գծուծ, խորածանկ, եգոխատ, վորոնք բացի
իրենց անձնական շահից ուրիշ վոչինչ չեն ընդունում:

Բայց Դոն Կիխոտի ամբողջ դրական ծրագիրը հանդիս ե
գալիս վեպի յերկրորդ մասում: Այստեղ Դոն Կիխոտը փայլում է
իր բարձր զարգացումով: Նրա փայլուն դատողությունները ար-
վեստի, գրականության, սոցիալական և քաղաքական կյանքի
մասին անպայման հանդիսանում են իր՝ Սերվանտեսի զաղա-
փարները: Ահա, որինակ, Դոն Կիխոտի դատողությունները ազա-
տության մասին—«Ազատությունը, Սանչո, այդ ամենաթանգա-
րին բանն ե, վոր տրված ե մարդուն: Վոչինչ չի կարող համեմատ-
վել նրա հետ, վոչ գանձը, վորը թագնված է յերկրի ընդերքում
կամ թե ծովի հատակում: Ազատության և պատվի համար մար-
դը պետք ե զոհի իր կյանքը, վորովհետև ստրկությունը հանդի-
սանում է յերկրային մեծագույն աղետը»:

Այս և պատճառը, վոր Դոն Կիխոտը մի առանձին համակ-
ըանքով և խոսում «վոսկե դարե» մասին.

«Յերջանիկ ե յեղել այն ժամանակը և բախտավոր այն
դարը, վոր հնում կոչվելիս ե յեղել վոսկե դար, այն ել վոչ թե

նրա համար, վոր վոսկուց ե (այնքան գնահատելի մեր յերկաթե
գարում)... այլ նրա համար, վոր այն ժամանակ ապրող մարդիկ
չգիտեյին յերկու բառ՝ իմը և բանը: Այդ սրբազն դարում ամեն
ինչ ընդհանուր եր... այն ժամանակ ամենութեք խաղաղություն,
բարեկամություն և համաձայնություն եր տիրում: Ստությունը,
նենգությունն ու խորամանկությունը չեյին խառնվում ճշմար-
տության և անկեղծության: Արդարությունն իշխում եր լիա-
կատար կերպով և վոչ շահամոլությունը, վոչ կողմանապահու-
թյունը, վոր հիմա այնքան ստորացնում են, ճնշում ու հալածում
են նրան (մարդուն—Հ. Մ.), չեյին հանդինում վոչ վիրագորել և
վոչ ել շփոթել նրան»:

Այս նույն արդարության և ճշմարտության գաղափարը
ընկա ծե այն խորհուրդների հիմքում, վոր տալիս և Դոն Կիխոտը
Սանչոյին՝ նահանգապատի պաշտոնին անցնելուց առաջ: «Աշ-
խատիր ամեն ինչի մեջ բացել ճշմարտությունը, աշխատիր
ճշմարտությունը տեսնել և՛ հարուստների խոստացած նվեր-
ների և՛ աղքատների հուսահատ հառաջանքների հետեվում»: Դոն
Կիխոտի խորհուրդները մի ամբողջ մեղադրական ճառ ե գոյու-
թյուն ունեցող կարգերի նկատմամբ և միաժամանակ մի դրա-
կան ծրագիր:

Սերվանտեսն իր ընթերցողներին կարծես թե ճիշտ կողմնո-
րոշելու նպատակով մի տեղ (գլ. 22) Դոն Կիխոտի մասին ասում
ե՝ «Նշանակալից ե, վոր այդ բարի հիգալգոն հիմարություններ
և գուրս տալիս այն ժամանակի, յերբ խոսք ե լինում ասպետա-
կան վեպերի և ասպետության մասին: Մյուս բոլոր խնդիրների
մասին նա այնպիսի առողջ դատողություններ ե անում, վոր
դուք ակամա գեպի նա հարգանք եք զգում»:

Յեկ ահա Դոն Կիխոտի ամբողջ դժբախտությունն այն ե,
վոր նա իր այդ լավագույն իշեալներն իրագործելու համար ընտ-
րել և թափառող ասպետների մեթոդները: Այս հանգամանքն ե
նկատի ունեցել Մարքսը, յերբ նկատել ե, վոր Դոն Կիխոտը իր
սիամի համար միշտ տուժում եր, կարծելով թե թափառող աս-
պետությունը հավասար չափով համատեղելի յե հասարակական
դոլոր տնտեսաձեվերի հետ:

Յեկ Դոն Կիխոտը այս բանի համար վոչ միայն տուժում
եր: Նա միաժամանակ դառնում է ծիծաղելի և նրա ամեն մի
բարի նպատակ ու ցանկություն տալիս և հակառակ արդյունքը:
Խելազարությունը թափառող ասպետների մեթոդներով դորձեն

և բուրժուական հասարակության պայմաններում, խելագարությունն այն ե, վոր Դոն Կիխոտը չի կարողանում հասկանալ, վոր թափառող ասպետների գարն անցել ե, վոր բուրժուական հասարակությունը բացասում և ասպետական գործունեյության ամեն մի մեթոդ։ Դոն Կիխոտը իրականությանը, նայում և ասպետական գրքերի ֆանտաստիկային աշխարհից, այդ պատճառով ել, ինչպես ընկեր Ստալինն, և նշում, նա իրականության զգացում չունի։

Սերվանտեսի սատիրայի ամբողջ իմաստն այն ե, վոր նրա հերոսը ցանկանում ե բարիք ստեղծել, բայց ցուցադրում և չարիքը։ Սերվանտեսի սատիրայի ամբողջ խորիմաստությունն այն ե, վոր նրա հերոսը աշխատում ե ֆանտաստիկական ձանապարհով վերացնել անարդարությունն ու կեղծիքը մի հասարակության մեջ, վորը կառուցված ե անարդարության և կեղծիքի վրա։ Նա ցանկանում ե վերացնել այդ հասարակական չարիքը, բայց աղաղակող և դարձում այն։

Դոն Կիխոտը պաշտպանում ե բատրակին։ Նրա աիրոջից պահանջում ե, վոր աշխատավարձը լրիվ վճարի, չծեծի նրան, և համոզված լինելով, վոր ամեն ինչ կարգավորվեց, հեռանում ե։ Բայց Սերվանտեսը ցույց է տալիս, վոր այդ բատրակի վիճակի մեջ վոչ մի փոփոխություն չկատարվեց։ Վորոշ ժամանակից հետո, յերբ բատրակը նորից հանդիպում ե Դոն Կիխոտին, ասում ե նրան «Զերդ գերազանցություն, հանուն ստեղծողի խնդրում եմ, յեթե մյուս անդամ հանդիպեք, այլևս չմտածեք ինձ ողնելու մասին, յեթե նույնիսկ ինձ չորս կտոր անեն։ Խնդրում եմ ինձ հանգիստ թողնեք։ Իմ գժբախտությունները, ինչպիսին ել նրանք լինեն, չեն կարող համեմատվել այն գժբախտությունների հետ, վորոնք ինձ սպասում են ձեր միջնորդությունից հետո»։

Նույն ճառով դիմում ե Դոն Կիխոտին բակալավրը, վորը խիստ տուժել ե տիսուր պատկերի ասպետի միջնորդությունից հետո։ «Իմ կոչումն ե, պատախանում ե Դոն Կիխոտը, վորպեսզի թափառեմ յերկրի յերեսին և վերականգնեմ արդարությունն ու վրեժ լուծեմ վիրավորանքների համար»։ — «Յես չգիտեմ, թե դուք ինչ եք հասկանում ճշմարտությունը վերականգնել ասելով, բայց յես այժմ դարձել եմ կաղ և հաշմանդամ։ Դուք տեսնում եք Զեր միջամտության շնորհիվ յես ընկած եմ այստեղ ջարդված վոտքով և նա յերբեք չի առողջանա։ Վրեժ

լուծելով ինձ հասցրած վիրավորանքների համար, դուք դրանով ինձ վիրավորեցիք, ինձ նես իհարկե չեր կարող պատահել ավելի վատ արկած, քան այն, վոր յես հանդիպեցի ձեզ, արկածներ վորոնողիդ։

Այս բոլոր դեպքերում սատիրան ուղղված ե վոչ միայն դոն Կիխոտի դեմ։ Դոն Կիխոտն իհարկե ծաղրվում ե, բայց դրա հետ միասին միթե Սերվանտեսը դրական գնահատական ե տալիս այն չարիքին, վորը ցանկանում ե վերացնել դոն Կիխոտը։ Միթե Սերվանտեսի սատիրան ուղղված չե նաև այդ չարիքի դեմ։ Խելագարությունը կապիտալիստական հասարակության պայմաններում հումանիստական իդեալների իրականացման վորձ ե նաև։ Դոն Կիխոտը ծիծաղելի յե վոչ միայն այն պատճառով, վոր նա զեկավարվում և ասպետական վեպերի սկզբունքներով։ Սերվանտեսի իրոնիան կազում ե նաև նրա լավագույն նպատակներին, վորովհետև նա, ինչպես վեպում ե ասված, ցանկանում ե ծուռը շտկել ուղղել Ցույց ե տրված, վոր այն հասարակարգում, վորտեղ նույնիսկ վաճառքի յե հանվում մարդկային սերն ու կոոջ մարմինը, չի կարող ծիծաղելի չլինել մարդկայնության և մարդկային արժանիքների պաշտպանության ամեն մի վորձ։

Դոն Կիխոտը ծիծաղելի յե, բայց միթե Սերվանտեսը դրա հետ միասին նորմալ յերեվույթ ե համարում կուլակի և նրա բատրակի փոխհարաբերությունը։

Այս բոլոր դեպքերում Սերվանտեսի սատիրան ունի յերկու ծայր, մեկը ուղղված ե դոն Կիխոտի ասպետական իդեալների դեմ, իսկ մյուսն այն իրականության դեմ, վոր ցանկանում ե փոխել տիսուր պատկերի ասպետն այնքան ֆանտաստիկական և այնքան ծիծաղելի ձանապարհով։

Սակայն դոն Կիխոտի կերպարի ամբողջ իմաստը մեզ համար պարզ կիմի միայն այն ժամանակը, յեթե այժմ պարզենք նրա զինակիր՝ Սանչոյի առանձնատկությունները և այն փոխհարաբերությունը, վոր գոյություն ունի նրանց միջեղ։

V.

Սանչո Պանսան վորպես գեղարվեստական կերպար նույնքան խորն ե ու բարդ, վորքան դոն Կիխոտը։

Առաջին հայացքից թվում ե, թե նա տիսուր պատկերի առ-

պետի հակադրությունն ե, բայց այդ հակադրությունը ընդհաւնուր փիլիսոփիայական իմաստով նույնազիսի մի անհրաժեշտ հակադրություն ե, ինչպես Մեֆիստօֆելը Թառատի նկատմամբ։ Յեթե Մեֆիստօֆելը Թառատի հակադրությունը լիների հանգերձ միաժամանակ լրացնում է նրան, ապա նույն սկզբունքը կիրառված է նաև Սերվանտեսի վեպում։

Սանչո Պանսան չքավոր գյուղացի յեւ Նրա ընտանիքը մըշտական կարիքի մեջ ե, թե Սանչոն և թե նրա կինը՝ Թերեզան մի հոգս ունեն միայն—ինչպես դուրս գալ տնտեսական ծանր վիճակից, աղատվել քաղցի ճիրաններից։ Թերեզան յերազում է այն մասին, վոր ամուսինը կարող է մաքսատանը մի վորեվել պաշտոն ստանալ, կամ կարող է դառնալ հարկահավաք։ Այս տեսակետից վերին աստիճանի կարեվոր է Թերեզայի նամակը Սանչոյին։ Գյուղում յերաշտ ե, աղբյուրները ցամաքել են, բերք չկա, գյուղում մի կաթիլ քացախ չի ճարվում։ Գյուղով մի գումարտակ է անցել իր հետ տարել է յերեք աղջիկ։ Կայծակը խփել և վոչնչացրել է կախաղանը և լավ կլինի, վոր բոլոր կախաղանները վոչնչանան։

Սանչոն իր տնտեսական ծանր գրությունից դուրս գալու միակ յելքը սկզբում տեսնում է վոսկու մեջ։ Նա շատ լավ է հասկանում, թե վոսկին ինչ արժեք և դեր ունի։ Ահա նրա փիլիսոփայությունը կյանքի մասին։

«Դու այնքան արժես, վորքան ունես և վորքան ունես, այնքան արժես։

Աշխարհում յերկու տիպի մարդ և յերկու կուսակցություն գոյություն ունի. այդ ունեվորների կուսակցությունն եւ չանփարների կուսակցությունը¹։ Սանչոն ունեվորների կուսակցության կողմանակից ե, վորովհետեւ նա ցանկանում է ունեվոր դառնալ։ Այս նպատակով ել նա դառնում է դոն Կիխոտի դինակիրը։ Նրա խոսակցության հիմնական թեմաներից մեկը դոն Կիխոտի հետ դրամն ե, աշխատավարձը և նահանգապետ դառնալու ցանկությունն ու խոստումը, վոր տվել ե նրան դոն Կիխոտը։

Նահանգապետ դառնալու այս յերազը այնքան է կլանում Սանչոյի եյությունը, վոր նա սկսում է այդ ուղղությամբ նախապատրաստվել։

«Ինչ անհնք յեթե իմ վասսալները կլինեն նեգրեր։ Ավելի

լավ։ Յես նրանց կկապեմ և անմիջապես իսպանիա կուղարկեմ, վորտեղ նրանց փոխարեն մաքուր գրամ կստանամ, իսկ այդ փողով ինձ համար կդնեմ վորեվե աստիճան կամ պաշտոն, վորն ինձ հնարավորություն կտա կյանքիս մնացած մասն անց կացնել առանց հոգաի և տիրության»։

Սանչոն լավ հասկանում է, վոր առանց գրամի և վոսկու վոչ մի քայլ չի կարող անել Սյատեղից ել նրա վոսկեսիրությունն ու զրամասիրությունը։

Սանչոն մեծ հույսեր և կապում կապիտալիստական հասարակության հետ, նա կարծում է, թե այդ հասարակության մեջ կարող է դուրս գալ չքավորության և թշվառության ճիրաններից։ Այս հանգամանքը մի քանի խորհրդային սերվանտեսագետների առիթ և տվել Սանչոյին համարել «կապիտալիստական պրոգրեսի ներկայացուցիչ», վոր իբր թե Սերվանտեսը քննադատելով ֆեոդալիզմը, գյուղացիության համար յելքը համարում է կապիտալիստական գարգացումը։

Բայց ամբողջ խնդիրն այն է, վոր կապիտալիզմի հետ Սանչոյի կտորած բոլոր հույսերը բառացիորեն և տառացիորեն չեն իրագործվում և մեկը մյուսի հետեւց ջախջախվում են։ Սերվանտեսը ցույց է տալիս, վոր Սանչոն բառացիորեն կանգնում է նույն կոտրած տաշտակի առաջ և նրան յերբեք չի հաջողվում իր տնտեսական գործերը կարգավորել։ Չի հաջողվում վոչ թե այն պատճառով, վոր դոն Կիխոտը չի կատարում իր տված խոստումը։ Սանչոն դառնում է Բարատորիա կղզու նահանգապետը և կարծեք թե արդեն առիթը ներկայանում ե նրա բոլոր յերազները իրականություն դարձնելու համար։ Բայց ահա Սանչոն հոժարակամ հրաժարվում է իր այս պաշտոնից, վորովհետեւ նա չի կարող շնչել կեղծիքի և ստորաքարշության մթնոլորտում։

«Նա գնաց գոմը, նրան հետեւեցին բոլոր ներկա յեղողները։ Մոտենալով իր եղին, զրկեց նրան, զգուշությամբ և արցունքներն աչքերին համբուրեց նրա ճակատը. — բարեվ իմ սիրելի եղ, իմ հավատարիմ բարեկամ, վոր ինձ հետ բաժանել ես իմ բոլոր ուրախությունները և տիրությունները։ Յերբ յես ապրում եյի քեզ հետ, յերջանիկ եյին իմ այդ ժամերը, որերը և տարիները, բայց այն ժամանակից սկսած, յերբ յես գնացի փառասիրության

¹. ընդդումը տեքստին է։

ճանապարհով, իմ հոգին տանջում են հաղարավոր տանջանքներ, հաղար դժբախտություն և չորս հաղար հոգ»:

Այնունետև Սանչոն նստելով իր եշի վրա հրաժեշտի ճառ և ասում. «Եյսպիսով բարի գիշեր պարոններ: Խնդրում եմ հայտնեք դուքսին, վոր յես մերկ ծնվել եմ, մերկ ել կմեռնեմ: Յես փոշինչ չօտիեցի և վաշինչ չկորցրի:

Յես վոչ մի կոպեկ չունեյի, յերբ ընդունեցի այս պետությունը և այժմ, յերբ յես թողնում եմ, վոչ մի գրոշ չունեմ: Հետ կանգնեք և ճանապարհ տվեք»:

Պալատականները խնդրում են, վոր նա մաս. «Ուշ ե,— ասում ե Սանչոն,—յես պատկանում եմ Պանսաների տոհմին, յեթի նրանք մի անգամ ասացին «վոչ», ապա նրանք իրենց խոսքի տերն են, թեկուզ վողջ աշխարհն առարկի»:

Սանչոյին հարցնում են, թե ինչ և ուղում իր հետ վերցնել. Սանչոն խնդրում է եշի համար մի քիչ դարի, իր համար կես գլուխ պանիր և մի քիչ հաց—նրան ուրիշ վոչինչ հարկավոր չե: Կես գլուխ պանիր և մի քիչ հաց—ահա ինչ և ստանում Սանչոն իր գրանդիող իլյուզիաների և յերազների դիմաց: Վերադարձի ճանապարհին նա այդ կես գլուխ պանիրը և հացը բաժանում ե մուրացիկ վանականներին, վորոնք նրանից վողորմություն են խնդրում: Բոլորը բաժանելուց հետո նա մանկական պարզամբ տությամբ մուրացիկներից ներողություն ե խնդրում, վոր ինքը «այլեվս վոչինչ չունի իր հետ»:

Եյսպիսով Սանչոն տառացիորեն դատարկաձեռն և վերադառնում տուն: Նրա բոլոր իլյուզիաները փշրկեցին, նա չկարողաց ազատվել քաղցի և թշվառության ճիրաններից: Նույն կիսաքաղց և մերկ մասուկները, նույն ծանր թշվառությունն ու դաժան հոգսը, նույն վոչխարի մորթին՝ վերմակի փոխարեն:

Սանչոն հաղարավոր թելերով կապված և ժողովրդի հետ նա իսպանական ժողովրդի խակական զավակն է: Ժողովրդի վողջ իմաստությունը նա արտահայտում և վերին աստիճանի պատկերավոր արտահայտությունների, իր նշանավոր առաջների և առակների միջոցով:

Նրա այդ առաջներն ու առակները և նրանց միջոցով արտահայտած իմաստությունը նրա սեփական ստեղծագործությունը չեն, իհարկե, այդ բոլորը պատկանում են ժողովրդին: Նրանք առաջացել են յերկար դաշտում, այդ առաջները հայտնի են առաջական պատկերավոր արտահայտություններից: Չե վոր յես բացի առակներից վոչ հարստություն ունեմ և վոչ ել հող»:

Խոտացել են ժողովրդի կենսափորձն ու վողջ իմաստությունը. և բանավոր վիճակում հաղորդվել են սերնդից սերունդ: Այդ պատճառով ել հաճախ դժվար ե վորոշել այն սահմանները, վոր դոյլություն ունի Սանչոյի և ժողովրդական իմաստության միջև: Յերբ Սանչոն ասում ե վորեկե հայտնի առած կամ առակ, այդ նրա մոտ ստացվում ե այնքան բնական, վոր թվում ե, թե նա հենց նոր հորինեց այդ: Մյուս կողմից, յերբ նա հորինում ե վորեկե սուր խոսք, ապա այդ նրա մոտ մի այնպիսի կենդանություն ե ստանում, վոր թվում ե, թե այդ վաղուց ծանոթ ժողովրդական առած ե:

Սանչոն այս իմաստով գտնվում և ժողովրդական իմաստության սահմաններում, նա ապրում ե բանահյուսության մեջ և նա կյանքի բոլոր յերեխույթները գնահատում ե, յելնելով այդ բանահյուսության դարավոր իմաստությունից:

Դոն Կիլսոտը Սանչոյին միշտ հետապնդում ե նրա առակների և առաջների համար: Սանչոյի առակները նրան այնքան են ջղայնացնում, վոր նա հայնոյում և վիրավորում ե նրան. «Յես գիտեմ ավելի շատ առաջներ,—ասում ե Սանչոն,—քան ասում եմ, նրանք այնքան շատ են, վոր լույս աշխարհ գալու համար իրար հետ կովում են»:

«Ո՛, թող անիծվես գու յերկնքով,—բացականչում ե դոն Կիլսոտը,—թող հիսուն հաղար սատանա տանի քեզ քո առաջների հետ միասին... Յես գիտեմ, առաջների շնորհիվ գու կյանքդ կվերջացնես կախաղանով: Նրանք կատիպեն քո վասալներին քո ձեռքից խել գավառապետի պաշտոնը, պատճառ կդառնան պետական գավաճանության և ազստամբության: Ասա ինձ, վորտեղից ես գտնում գու այդ առաջները, տգետ. յեվ ինչպես ես դու կարողանում ոգտվել, հիմար, վորպեսզի տեղին մի առած գտնեմ և գործածեմ, յես աշխատում և քրտնում եմ, կարծես թե քար եմ պատում»:

«Ճեսնում եք ձերդ գերազանցություն,—պատասխանում ե Սանչոն,—գատապարաւում եք ինձ այդպիսի չնշին բաների համար: Վո՞ր սատանան կարող ե խանգարել ինձ ոգտվելու իմ բարիքից: Չե վոր յես բացի առակներից վոչ հարստություն ունեմ և վոչ ել հող»:

Սանչոյի առանձին սրամտությունները և առաջները համախ այնպիսի խորը փելիսովիայական միաբ են պարունակում,

վոր համարձակորեն նրան կարելի յե համարել մեծագույն մատածող և փիլիսոփիա:

Ծանոթանանք Սանչոյի մի քանի գատողությունների հետ.

«Վիշտը ստեղծված ե վոչ թե անասունների, այլ մարդու համար: Բայց յերբ մարդիկ տարվում են վշտով, այնպէս վոր դուրս են գալիս ամեն չափ ու սահմանից, դառնում են անասուն»:

Սանչոյի փիլիսոփիայությունը յերազի մասին.

«Յերբ յես քնած եմ, չունեմ վոչ վախ, վոչ հույս, վոչ վիշտ, վոչ ել ուրախություն: Թող որհնավի նա, ով հնարել ե յերազը—մի վարագույր, վոր ծածկում ե բոլոր մարդկային մտքերը:

Քաղցածը հեշտությամբ կերակուր ե ստանում, ծարավը՝ ջուր, մրսողը՝ կրակ, շոգողը՝ հով: Մի խոսքով յերազը համաշխարհային դրամ ե, վորով կարելի յե գնել այն ամենը, ինչ վոր ցանկանում ես, մի կշեռք, վորի նժարների վրա թագավորը հավասարվում ե հովիվին, իմաստունը՝ հիմարին»:

Սանչոյի փիլիսոփիայությունը մահվան մասին.

«Թագաժառանգը մահից հետո, յերբ նրան գերեզման են դնում, գնում ե նույն նեղ ճանապարհով, վորով գնում ե նրա հարկատուն: Իսկ պապի մարմինը դերեզմանում տիրացույի մարմնից ափելի մեծ տեղ չի գրավում: Դագաղ մտնելու համար մենք բոլորս փոքրանում ենք, կուչ ենք գալիս ինչպես վորսի, ավելի լավ ե ասել մեղ փոքրացնում են, վորնու նման կուչ են ածում, չնայելով այն բանին, թե այդ մեղ դուր ե գալիս, թե չե, իսկ հետո ցտեսություն, բարի գիշեր»:

Յեվ հետո. «Եյդ տիկինը (մահը—Հ. Մ.) ավելի շատ հզոր ե, քան քաղաքավարի: Նա ամեն ինչ խժում ե, լցնում ե իր պարկը բոլոր տարիքների, արհեստների և աստիճանների մարդկանցով: Նա մի հնձվոր ե, վոր չիմանալով ինչ ե հանդիսաւը, հնձում ե ամեն ժամ, թե կանաչ և թե չոր խոտ: Թվում ե, թե նա կտորները չի ծամում, այլ կուլ ե տալիս ամբողջությամբ: Նա գայլի ախորժակ ունի, վորը չի կարելի վոչ մի բանով հագեցնել: Յեվ վորպեսզի իր ծարավը կոտրի, նա միանգամբից խմում ե բոլորի կյանքը, ինչպես մի բաժակ սառը ջուր են խմում»:

Այս բոլորից պարզ յերեվում ե, վոր Սանչոն այն տափակ և պրոզան չե, ինչպես պատկերացրել են նրան բուրժուական սերվանտեսները: Նրա բոլոր դատողությունների հիմքում

ընկած ե ժողովրդական բանահյուսության իմաստությունը: Սանչոն իսպանական ժողովրդի լավագույն ներկայացուցիչն ե:

Այս բոլորի հետ միասին Սանչոն ատելությամբ ե լցված վեպի ամեն մի ազնվական կոչում և աստիճան: Նրան խորթ ե ստրկական վոգին և ստրկական ստորաքարցությունը: Նա համախ բարձրից ե նայում բոլոր ազնվականներին և մեծ վարպետությամբ պաշտպանում ե իր իրավունքներն ու մարդկային արժանապատվությունները: Դուքսերի պալատներում նա իրեն շատ աղատ ե պահում, գլուխը բարձր, հպարտ: Հանդիսավոր ընդունելություններից մեկի ժամանակ նա առանց այլեվայլության գիմում ե բարձրաստիճան ազնվուհիներից մեկին և խնդրում ե, վոր իր եղի մասին հող տանեն, տանեն գոմը և կերակրեն: Կատաղած ազնվուհին հայհոյում ե Սանչոյին նրա այդ անպատկառ վարքագծի համար. «Դուք բացի թղից, ինձնից ուրիշ վոշինչ չեք ստանա, անտաշ հիմար»: Սանչոն առանց շփոթվելու պատասխանում ե. «Յեթե այդ թուղը նույնքան մեծ տարիք ունի, վորքան ձերդ պայծառավայլությունը, ապա նա համենայն գեպս լիսկած ե»:

Յերբ Սանչոն ընդունում ե գավառապետի պաշտոնը, պալատականները նրան անվանում են «գոն Սանչո Պանսա»: Բայց Սանչոն զարմացած հարցնում ե. «Ո՞ւմ եք դուք դոն Սանչո Պանսա անվանում»: Իհարկե ձեղ, պատասխանում են պալատականները. «Իմացեք, վոր յես դոն տիտղոս չունեմ և իմ նախնիներից վոչ մեկը չի ունեցեն: Ինձ կոչում են ուղղակի Սանչո Պանսա: Սանչո կոչվել ե իմ հայրը, իմ պապի անունը յեղել ե Սանչո և բոլորն ել յեղել են Պանսա առանց վորեկի դոնի կամ մի ուրիշ ածականի: Յենթաղբում եմ, վոր այս կզզու վրա դոները ավելի շատ են, քան քարերը: Ասալված տա, կապրենք, կտեսնենք, յեթե իշխանությունն անցնի իմ ձեռքը, յերեվի չորս որվա ընթացքում ինչպես մոլախոտ արմատախիլ կանեմ այդ բոլոր դոներին, վոր այդքան շատ են ածել: Նրանք ավելի շատ են զահլա տանում քան մոծակներն ու մժեղները»:

Սանչոն իր վողջ իմաստությամբ և ընդունակություններով փայլում ե այն ժամանակ, յերբ դառնում ե գավառապետ: Նա հանդես ե բերում պետական գործչին հատուկ բոլոր ընդունակությունները: Նրա կատարած պետական սեփորմները, նրա հրատարակած որենքները, նրա պայցարը գների բարձրացման և

առհասարակ վաճառականության շառլատանության դեմ, նրա արհամարհանքը գեպի կաշառակերությունը և գեպի հայտնի ընկերները, նրա հանգես բերած մեծագույն հոգատարությունը գեպի չքափորներն ու ժողովուրդը—այս բոլորը դարձյալ ցույց են տալիս նրա սերտ կապը իսպանական ժողովրդի հետ: «Սանչոյի պետական միջոցառություն այնքան լավ ելին, յեզրափակում ե Սերվանտեսը, վոր նրա որենքները մինչեվ հիմա գործում են այդ յերկրում: Այդ որենքներն այնտեղ կոչվում են «Մեծ կառավարիչ Սանչո Պանսայի որենքները»:

Իսկ այդ «Մեծ կառավարիչ» Սանչոն այսպես ե գնահատվում Սերվանտեսի կողմից. «Հպարտացիր, Սանչո, քո համեստ ծագումով և մի ամաչիր նրանից, այդ ժամանակ վոչ վոք նրանով քեզ չի կարող ամաչեցնել: Ավելի լավ ե հպարտացիր նրանով, վոր դու ցածր ծագում ունեցող արդար մարդ ես, քան թե բարձր ծագում ունեցողի անարդարությամբ: Յեթե դու քեզ դեկավար ընտրես առաքինությունը և անուն հանես քո բարի գործերով, ապա այդ ժամանակ դու կարիք չունես նախանձելու նրանց, ովքեր իրենց նախնիներին համարում են պրինցներ և այլ հայտնի մարդկանց: Այրյունը ժառանգվում ե, իսկ առաքինությունը ձեռք ե բերվում և գնահատվում ե այնքան բարձր, վոր չի կարող գնահատվել արյունը»:

Սանչոյի տիպը հասկանալու համար նրան պետք ե դիտել այդ եպոխայի գյուղացիական շարժումների համայելքրոպական ֆոնի վրա: Կապիտալի նախանկղբնական կուտակման պրոցեսները Արեվմտյան Յեղողացի գրեթե բոլոր յերկրներում գյուղացիությանը կանգնեցրին ամենաանտանելի վիճակի առաջ: Այդ այն ժամանակաշրջանն եր, յերբ Թումաս Մորի արտահայտությամբ՝ «վոչխարները կերան մարդուն», և այդ «վոչխարին» դոն գնացին ամենից առաջ գյուղացիները: Նրանք քշվում ելին հողից, նետվում ելին կարիքի և թշվառության դիրկը: Յեկ այս հողի վրա առաջացած գյուղացիական շարժումներն ու ապստամբություններն Անգլիայում, Իսպանիայում, Գերմանիայում, յերբեք չեն խոսում այն մասին, թե գյուղացիությունը յելքը ցանկանում եր գտնել կապիտալիստական պրոգրեսի մեջ:

Ճիշտ ե, գուցե գյուղացիության վորոշ շերտերը, ինչպես Սանչոն, մեծ հույսեր ելին կապում կապիտալիզմի զարգացման հետ, բայց հույսն այլ բան ե, նրա իրագործումն այլ:

Սերվանտեսը վորպես խոշորագույն ռեալիստ ցույց ե տալիս, վոր այդ հույսերը չիրագործվեցին:

Սերվանտեսը ցույց ե տալիս, վոր կապիտալիզմի հետ կապված սանչոների բոլոր հույսերը կործանվեցին, վոր նրանք կապիտալիզմի մեջ յելք չեն կարող գտնել:

Ահա թե ինչու Սանչոն հանգիսանում և վոչ թե բուրժուական, այլ ժողովրդական պրակտիկայի մարմնացումը:

Այդ պատճառով ել միանգամայն բնական ե նրա սիրո կապը դոն կիխոտի հումանիստական գիտակցության հետ:

VI.

Ինչպես տեսանք, նախախորհրդային սերվանտեսագետների մի զգալի մասը, դոն կիխոտի և Սանչո Պանսայի մեջ տեսնում ելին իդեալի և իրականության, պոեզիայի և պրոզայի հավիտենական հակագրությունը: Ճիշտ ե ինարկե վոր տառը պատկերի ասպետի և նրա զինակը միջև հակագրությունները շատ կան: Այդ հակագրությունները սկսվում են նրանց արտաքինի նկարագրությունից: Սանչոն մշտապես ծաղրում ե իր տիրոջը, ծիծաղում և նրա վրա:

Սանչոն ռեալիստ ե, իրականության զգացումը նրա մեջ ուժեղ ե, տիրոջ մեջ բացակայում ե: Բայց յեթե ուշագրությամբ հետեւինք նրանց հակագրության բոլոր կոնկրետ դեպքերին, ապա դժվար չի նկատել, վոր Սանչոն բոլոր դեպքերում ծաղրում և միայն իր տիրոջ ասպետական իլյուզիաները, բայց մյուս դեպքերում վոչ միայն կապված ե նրա հետ, այլև անսահմանորեն սիրում ե դոն կիխոտին:

Սխալ կլիներ կարծել, թե Սանչոն դոն կիխոտի հետ կապված ե միայն նյութական նկատառություններով: Այս մոտիվն ինարկե կա, բայց նա այնքան ելական ու խորը չե, ինչպես կարող ե թվալ առաջին հայցքից: Մի անգամ, յերբ խոսք ե լինում աշխատավարձի մասին, դոն կիխոտը հենվելով ասպետական վեպերի վրա, մերժում և Սանչոյի պահանջը, ասելով, թե թափառող ասպետների գինակիրները աշխատավարձ չեն ստացել: Սանչոն վերին աստիճանի վիրագորված ե զգում իրեն: Դոն կիխոտը կարծում ե, թե Սանչոն կթողնի պաշտոնը և կհեռանա: Նա ասում ե, թե այդ դեպքում նա առաջին հանդիպած մարդուն կվերցնի վորպես զինակիր: Յեկ հետո այս անախորժ խոսակցությունը

վերջանում և նրանով, վոր նրանք գըկախառնվում են և հաշտվում։ Սանչոն աշխատավարձի մասին այլեվս վոչ մի բառ չի ասում։

Դոն Կիխոտի և Սանչոյի անկեղծ, անշահախնդիր կապերի մասին կարելի յե բերել բազմաթիվ փաստեր։ Յերբ Սանչոն դնում և կղղի, գալառապետի պաշտօնով, բաժանման ժամանակ «դոն Կիխոտը նրան արցունքներն աչքերին հաջողություն մախթեց և Սանչոն ընդունեց այդ, յերեխայի նման հեկեկոցը զսպելով»։ Սանչոյի գնալուց հետո դոն Կիխոտը «մի այնպիսի տիրություն գգաց նրա գնալու առթիվ և այնպիս իրեն մենակ զգաց, վոր յեթե նա կարողանար, նրանից կվերցներ գալառապետի պաշտօնը, Սանչոյին վերադարձներու նպատակով»։

Նույն անկեղծ սերը գոյություն ունի Սանչոյի մեջ դոն Կիխոտի նկատմամբ։ Ահա թե ինչպես և Սանչոն ընորոշում իրենց փոխհարաբերության ընույթը. «Իմ վիշտը և դժբախտությունը հենց այն ե, վոր յես պետք և հետեւիմ նրան և չեմ կարող չհետեւիլ։ Մենք հայրենակիցներ ենք, միասին հաց ենք կերել, յես նրան շատ եմ սիրում և բացի այդ յես իմ բնավորությամբ ճշմարիտ մարդ եմ։ Այսպիսով վոչ մի բան չի կարող բաժանել մեզ իրարից մինչեւ մեր գերեզմանը, յերբ մեզ համար խոնավ հողում անկողին կպատրաստեն։»

Մի այլ տեղ Սանչոն ասում ե. «Նա պղավնու սիրտ ունի, նա վոչ վոքի չի կարող վատություն անել. նա բոլորին լավություն և անում և նա չունի նենգության վոչ մի նշան։ Յերեխան կարող և նրան հավատացնել, վոր յերեկիվա ժամը 12-ին խոր գիշեր ե. Ահա այս պարզամտության և անկեղծության համար ել յես նրան սիրում եմ, ինչպես աչքիս լույսը և չեմ կարող թողնել նրան, ինչպիսի հիմարություններ ել նա կատարի»։

Իսկ դոն Կիխոտը Սանչոյին այսպես և ընութագրում։

«Սանչո Պանսան լավագույն զինակիրներից մեկն ե... Նրա զրույցներում հանդիպում ենք այնպիսի սքանչելի միամտության, վոր բավարարություն ես զգում և մտածում ես, թե ով և նա, հասարակ մի մարդ, թե աշխարհի յերեսին ամենասրամիտ մարդը։ Նա յերենին չար կատակներ և անում, վորոնք ստիպում են մտածել, վոր նա նուրբ և ու խորամանկ. Նա ունենում է նաև հիմարագույն արարքներ, վորին ընդունակ և միայն գյուղական անգրագետը։ Նա կասկածում ե ամեն ինչի վրա և միա-

ժամանակ հավատում և ամեն ինչի. Յերբ յես մտածում եմ, թե ահա նա կընկնի անմտությունների հատակը, նա այնպիսի բառեր ե բաց թողնում, վորոնք նրան բարձրացնում են յերկնքից վեր։ Մի խոսքով յես Սանչոյին չելի փոխարինի ուրիշ զինակրով, յեթե դրա դիմաց ինձ նույնիսկ մի ամբողջ քաղաք տային։

Դոն Կիխոտը աշխատում և արհեստականորեն պահպանել այն տարածությունը, վոր գոյություն ունի տիրոջ և ծառայի միջև։ Յեվ չնայած Սանչոն յերբեմն համբուրում և նրա ձեռքը և նույնիսկ հագուստի ծայրը, այսուամենայնիվ նրանց մեջ գոյություն ունի լիակատար աղատություն։ Դոն Կիխոտը յերբեմն զայրանում և Սանչոյի վրա, նրան հայնոյում և ինչպիս տերը ծառայալ մեջաղաղ բարձրացնություն և ինդրում ծառայից, ևների Սանչո, դու հասկացող մարդ ես և չես կարող չիմանալ, թե վորքան դժվար և զապել զայրույթի առաջին պոոթկումը»։

Թե վոր չափով Սանչոն իրեն ազատ և պահում դոն Կիխոտի մոտ, այդ յերեկում և այն տեսարանից, վորտեղ Սանչոն ամբողջ ուժով պաշտպանվում և իր տիրոջ հարձակումներից։

Դոն Կիխոտին հավատացըել են, թե նրա Դուլցինեյան այն ժամանակ կազատվի կախարդանքից, յերբ նա Սանչոյին յերեք հազար յերեք հարյուր հարված տա փայտով։ Քանի վոր Սանչոն հոժարակամ չեր ցանկանում այդ հարվածները ստանալ, դոն Կիխոտը մի անգամ գիշերը, յերբ Սանչոն քնած եր, անսպասելիորեն հարձակվում նրա վրա և պատրաստվում ե գոնե յերկու հազար հարված հասցնել։ Այդ ժամանակ Սանչոն արթնանում ե. «Նա վեր կացավ, ցատկեց իր տիրոջ վրա, գրկեց նրան ձեռքերով ու այնպիս խփեց վոտքով, վոր դոն Կիխոտը ամբողջ հասակով փռվեց գետնի վրա։ Յեվ հետո ծունկը գնելով նրա կրծքին, թույլ չեր տալիս վոչ շարժվի, վաչ ել հոգոց հանիւ։ Դոն Կիխոտը բղավում ե նրա վրա. «Ի՞նչպես, դաշտան, դու համարձակվում ես բունտ բարձրացնել քո որինական տիրոջ գես, վորը քեզ կերակրում ե»։

Սանչոն պատասխանում ե. «Յես բունտ բարձրացնելու մտագրություն չունեմ, միայն պաշտպանում եմ իմ մարմինը, վորի իսկական տերը յես եմ։ Թող ձերդ գերազանցությունը խոսք տա, վոր ինձ ձեռք չի տա և թող նա հրաժարվի իր մտագրությունից, միայն այդ գեպքում յես ձեզ ազատ կթողնեմ և թույլ կտամ վեր կենաք»։

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր Սանչոն և դոն

Կիխոտը վոչ միայն հակադրություններ են, Նրանց միջեվ գոյություն ունի վերին աստիճանի անկեղծ կապ: Սանչոն իր տիրոջ մեջ ծաղրելով նրա ասպետական իլյուզիաները, միաժամանակ շատ բարձր և գնահատում նրա այն դրական կողմերը և նպատակները, վորոնց մասին խոսվեց վերեւում:

Դոն Կիխոտի պայքարը արդարության և ճշմարտության համար, թշվառներին ոգնելու և պաշտպանելու համար, նրա ազնվությունն ու բարձր մարդասիրությունը—ահա այն շղթան, վոր Սանչոյին կապում և դոն Կիխոտի հետ:

Սրանով պետք եւ բացատրել այն հուղիչ տեսարանը, վորով վերջանում եւ «Դոն Կիխոտը»: Վերջին ժամերն ապրող դոն Կիխոտը յեկել եւ այն յեղբակացության, վոր իր ասպետական թափառությունը հիմար բան են յեղեւ: Նա հայտարարում եւ, վոր ինքն այլևս դոն Կիխոտ չե, այլ Ալոնսո Կիխոնո, վոր նա այժմ Ամադիս Դալիացու և նրա բյուրավոր ժաւանգների թշնամին և և վոր նրա համար այժմ ատելի յին թափառող ասպետների բոլոր ամբարիշտ պատմությունները: «Յես հասկացա այն անմտությունները և այն վտանգը, վորին յենթարկեցի ինքս ինձ՝ կարդալով այդ պատմությունները»:

Սանչո Պանսան խորապես հուղված եւ: Նա արցունքներն աչքերին դիմում և մեռնող դոն Կիխոտին.

«Ախ, չմեռնեք, ձերդ գերազանցություն, տեր իմ, լսեցեք իմ խորհուրդը, ապրեցեք ևս բաղում տարիներ: Վորովհետեւ մեծագույն խելագարությունը, վոր կարող եւ անել մարդս, մեռնելն եւ, այն ել առանց վորեվել պատճառի, յերբ նրան սպանող չկա և վոչինչ չի մաշում նրան, բացի թախիծից»:

Դոն Կիխոտն իր հերթին Սանչոյին կտակելով իր փողերը, ասում եւ: «Յեթե խելագարության ժամանակ յես ոգնեցի նրան կղզու կառավարությունը ստանալու համար, ապա հիմա առողջ մտքով, յես յեթե ի վիճակի լինեյի, վողջ թագավորություն կտայի, վորովհետեւ նրա պարզ ու հավատարիմ սիրտն արժանի յեւրան»:

* *

Այսպիսով դոն Կիխոտի վոչ միայն ասպետական իլյուզիաները, այլև բոլոր հումանիստական իդեալները, կաչելով բուրժուական իրականությանը, ջախջախվեցին ճիշտ այնպես, ինչպես այդ իրականության հումորը վերաբերեց: Մեկը ցանկանում եր

պաշտպանել արդարությունն ու ճշմարտությունը մի հասարակության մեջ, վոր կառուցված եւ կեղծիքի և խարեյության վրա, պաշտպանել մարդկային արժանապատվությունը այն ժամանակ, յերբ վոր այդ բոլորը վաճառքի յեւ հանվում, իսկ մյուսը աշխատում եր դուրս գալ աղքատության ճիրաններից այն ժամանակ, յերբ հասարակության մի մասի յերջանկությունը կառուցվում եր մյուսների աղքատության և դժբախտության վրա:

Բայց ու վերին աստիճանի տիսուր եր համարում այն բարոյախոսությունը, վոր բղիքում և Սերվանտեսի վեպից: Բայց մի՞թե Սերվանտեսը մեղավոր ե, վոր նա կյանքը արտացոլում եւ իր ճշմարտապատում արտահայտությունների մեջ: Այս, Սերվանտեսի վեպից բղիքում ե, վոր դոն Կիխոտը իր լավագույն իդեալներն իրագործելու համար ընտրել ե մի հասարակություն, վորը թշնամական և այդ իդեալներին, մի հասարակություն, վորի մասին Շեքսպիրը Գրոստերի բերանով ասում եւ «Սերը պաղում ե, բարեկամությունը թուլանում, յեղբայրները միմյանց գեմ են յենում, քաղաքներում ապստամբություններ, գյուղերում պառակտումներ, պալատներում դավաճանություն, հոր և վորդու մեջ կապը խզվում ե... մեքենայություններ, խարդախությունն, մատնությունն և ամեն տեսակի կործանիչ խառնակություններ հալածում են մեզ անդադար մինչեվ մեր գերեզմանը»:

Վորը յելքը և ինչ եւ հակագրում Սերվանտեսը այս բոլորին: Համենայն դեպ մի բան պարզ ե, վոր նրա համար ծիծաղելի յեւ ֆեոդալիզմը և Սերվանտեսն առանց խղճի խայթ զգալութողնում եւ ֆեոդալիզմը և տիսուր պատկերի ասպետի ֆեոդալական զառանցանքները (ինքը դոն Կիխոտն եւ այն զառանցանք համարում): Բայց մյուս կողմից Սերվանտեսը ձեռքը չի մեկնում կապիտալիզմին, վորովհետեւ այդ իրականության մեջ վոտնահարված և ճշմարտությունն և իրավունքն ու արդարություննը: Սերվանտեսի սատիրան ուղղված եւ ֆեոդալիզմի և կապիտալիզմի դեմ: Սերվանտեսի վեպի խորհրդային լավագույն մեկնաբանողներից մեկը՝ Ն. Յա. Բերկովսկին միանգամայն իրավացիորեն գրել եւ «Սերվանտեսի մոտ ուժեղ եւ պահանջը այլ նորմաների և ավելի հարուստ ու ավելի մարդասիրական կյանքի, քան բուրժուական շահերի այդ թագավորությունն եւ: Սերվանտեսի հումորը վերաբերում եւ և բուրժուական իրականությանը և այն ֆանտասմանը»:

ներին ու ուրվականներին, վորոնք չնայած ընդունակ են վարչակարեկելու և խայտառակելու այդ աշխարհը, բայց իրենք հազիվ են կանգնում իրենց վոտքերի վրա»:¹

Այդ ավելի հարուստ, գեղեցիկ և հումանիստական կյանքի պահանջը ամբողջովին բղխում եր ժողովրդի շահերից և Սերվանտեսի ժողովրդայնության գաղտնիքը պետք և վորոնել հենց այստեղ: Թաղերով գեղալիքմը և վարկարեկելով ու խայտառակելով կապիտալիստական հասարակության այլանդակությունները, Սերվանտեսը հենց դրանով վեր երարձրանում իր դասի՝ մանր, քայլայվող աղնվականության (հիգալգո) նախապաշարումներից և իր ստեղծագործության սրյեկտիվ բովանդակությամբ կանգնում և ժողովրդական գիրքերի վրա: «Սերվանտեսը չի պատկանում վոչ բուրժուազիային և վոչ եւ իշխող դասակարգերին: Նա ամենից առաջ պատկանում է իսպանական ժողովրդին»:²

Յեվ միանգամայն իրավացի յե նշանավոր խորհրդային սերվանտեսագետ Բ. Ա. Կրժեկվալին, յերբ դրում ե.

«Սերվանտեսի մեծությունն արտահայտվում է առաջին հերթին նրա պատմական հոտառության մեջ, յերբ նա կարողացավ հիգալգոների կործանման և կապիտալի նախակղբնական կուտակման վորորապտույտի մեջ տեսնել հիմնական շարժող ուժերի համեմատությամբ այն թույլ կողմը, ժամանակակիցների կողմից ընդունված այն դեմոկրատական ալիքը, վորին պատկանում է ապագան: Միայն այստեղ, այս ուղղության մեջ պետք և վորոնել բացարությունն այն բանի, թե ինչու Սերվանտեսը գրականության պատմության մեջ հանդես ե գալիս վորպես ժաղավագործական գրող, վորոնց վորոնում և գտնում են դարաշըճանմերը, պատմական յելքը տեսնելով լայն դեմոկրատիայի մեջ»:³

Յեվ իսկապես Սերվանտեսը ամուր թելերով կապված և ժողովրդի հետ: Բավական և համեմատել այն նկարագրությունները, գոր տրվում են հասարակական տարբեր խավերին և շերտերին: Դուքսերի և դքսուհիների դասությանը:

¹ Н. Берковский, «Эволюция и формы раннего реализма на Западе», «Ранний буржуазный реализм» ժողովածուն, 1936 г. л. стр. 26

² Б. М. Энгельгард, «Сервантес и его роман»: „Դոն Կիւտուաի“ 1938 թվի հրատարակության վերջաբնը:

³ Б. Кржевский, «Сервантес». «Ранний буржуазный реализм» ժողովածուն, եջ 176:

թյունը հակադրվում է ժողովրդի ծոցից դուրս յեկած ներկայացուցիչների վառ և գունեղ նկարագրությանը:

Սերվանտեսն այս ժարդկանց մոտ գտնում է այնպիսի դրական կողմեր և հատկություններ, վորոնց նկարագրության վրա կանգ է առնում մեծ սիրով ու համակրանքով: Կոպիտ, վոչ գրավիչ արտաքին ունեցող Մարիտորենը իր վերջին կոպեկներով Սանչոյի համար գնում է մի գավաթ գինի:

Ժողովրդական ներկայացուցիչների թշվառության, մուրացկանության և հալածական ու անապահով կյանքի նկարագրության մեջ ե, վոր հանդես ե գալիս Սերվանտեսի հումանիզմը: Նրա ուսակիզմը, կյանքը նկարագրելու նրա մեծագույն վարպետությունը միանում է խորին հարգանքի և սիրո հետ զեպի մարդն ու առնասարակ գեղի մարդկային լավագույն արժանիքները: Ճիշտ ե նկատել քննադատներից մեկը, վոր այդ հումանիզմը Սերվանտեսին թույլ ե տվել տեսնել դոն Կիւտուաի խելագարության տակ բարի նպատակներ և իմաստություն: Այդ հումանիզմը թույլ ե տվել գյուղացի գինակրի մեջ տեսնել ազնըվություն, անկեղծություն, կյանքը ճանաչելու խորը ընդունակություն և ժողովրդական առողջ միտք ու զատողություն: Նա Սանչոյին գարձնում է իմաստուն և հմուտ գավառապետ, նրան հակադրելով դատարկ, ապուշ և կաշառակեր դուքսին ու գավառապետներին:

Սերվանտեսի ժողովրդայնությունը սերտորեն կապված է նրա ուսակիզմի և հումանիզմի հետ: Սրանով ել պայմանավորվում է նրա հումորի և սատիրայի բոլոր առանձնահատկությունները: Նրա սատիրան փորքան ել ջախջախիչ լինի, ծիծաղը սպանիչ, այնուամենայնիվ հուետեսության վոչ մի նշույլ չկա նրա մոտ: Սերվանտեսի վեպը, չնայած խորը տրագիզմին, վերին աստիճանի կենսուրախ ե: Նրա այդ լավատեսության և կենսուրախության մեջ արտահայտվում է անսահման հավատը դեպի ժողովրդի ուժը, գեղի մարդն ու նրա սատեղագրործական կարողությունները:

VII.

Յեվրոպական նշանավոր վիպասաններից մեկը, Զախեր Մազոխը, վեպի մասին գրել ե. «Գեղարվեստական ստեղծա-

գործության բարձր տեսակը միշտ կարող ե հանդիսանալ այս սեռը, վորի մեջ հեղինակը կարտացովի մարդկային կյանքը և բնությունը իր բոլոր արտահայտությունների մեջ, իսկ այդպիսի սեռ ժամանակների մարդկանց համար հանդիսանում ե և կարող ե լինել միայն վեպը, ժամանակակից կյանքի այդ եպոսը, վորը իր տեսազաշտն այնքան լայն և տարածել, վորդրան չեն կարող հասնել վոչ լիբիկան և վոչ ել դրաման։ Միայն վեպի մեջ գրողը կարող ե ընդգրկել վողջ կյանքը, միայն վեպի ձեռվ կարող ե մարմարվորվել գեղարվեստական ամբողջությունը, այսինքն գաղափարների և ոեալ կյանքի հանդիպումը։ Այս, ինչ վոր լիբիկական պոետը, սատիրիկը, դիդակտիկական բանաստեղծը արտահայտում են հատվածարար, մասերով, վիպասանը կարող է արտահայտել գեղարվեստական ամբողջության ձեռվ։ Նախավես եպիկական բանաստեղծ՝ մեր առաջ պատկերացնում ե բնության և հասարակական կյանքի պատկերները, ինչպես դրամատուրգ՝ նա ստիպում է իր հերոսներին խոսել ու գործել, ինչպես լիբիկական բանաստեղծ, նա արտահայտում է այդ հերոսների և իր սեփական զգացմունքները, ապրումներն ու մտքերը։ Յերկրի վրա չկա վոչ մի բան, վոր գուրս մնա նրա տեսադաշտից և չկա մի բան, վոր նա չկարողանա նկարագրել։

Ոեալիստական վեպը, վորպես նոր ժամանակների եպոս, իր այս ունիվերսալ նշանակությամբ հանդես և գալիս Սերվանտեսի և Գրանսիական հումանիզմի խոշորագույն ներկայացուցիչ Ռաբլեյի մոտ։

Ինչպես ոեալիզմի, այնպես ել մասնավորապես ոեալիստական վեպի առաջացումը և ձևավորումը սերտորեն կապված երան պայքարի հետ, վոր մղում եյին վերածնության դարաշրջանի հումանիստաները ֆեոդալական կարգերի և կղերա-ֆեոդալական աշխարհայցքի դեմ։ Այս իմաստով կարելի յի ասել, վոր թե ոեալիզմի և թե ոեալիստական վեպի առաջացումը կապված եր ֆեոդալական Յեվրոպայի քայլքայման և բուրժուական հասարակության առաջացման և ձևավորման հետ։ Բոլորովին պատահական չե, վոր Յեվրոպական գրականության առաջին խոշոր ոեալիստները՝ Բոկկաչիոն, Ռաբլեն, Շեքսպիրը, Սերվանտեսը, Լուպե գե Վեգան, Երազմ Ռոտերգամցին և այլն հանդես յեկան վերածնության դարաշրջանում։ Ինչպես տեսանք, վերածնության եյությունը վերջիվերջո մարդու և բնության հայտնագոր-

ծումն եր, մարդու բնական ինքնորոշման և նրա ոեալ պահանջների լիակատար բավարարման սկզբունքը։

Գրականության պատմության մեջ կատարված հեղաշրջման վողջ իմաստն այն եր, վոր գրականության առանցքը դառնում է ոեալ մարդը, հասարակական կյանքը և բնությունը։ Այս հեղաշրջման մեջ Սերվանտեսը կատարել է վերին աստիճանի կարեվոր դեր, թե վորպես ոեալիստական արվեստի պրակտիկ ստեղծող և թե վորպես տեսաբան։

Սերվանտեսը յեղել է ոեալիզմի խոշորագույն տեսաբաններէց մեկը։ Ճիշտ ե նա կոպեյի նման չի գրել տեսական աշխատություն, բայց նրա առանձին դիտողությունները և ասույթները, վոր մենք հանդիպում ենք, թե նրա նովելաներում և թե վեպում, ցույց են տալիս, վոր Սերվանտեսը տեսականորեն գիտակցել է իր ստեղծած գրական ուղղության վողջ իմաստը։

Սերվանտեսի հիմնական պահանջը գրականության բոլոր ձուղբերից յեղել է ոեալիզմը, — «Դրաման», — գրում է Սերվանտեսը «Դոն Կիխոտում», — պետք ե լինի մարդկային կյանքի հայելին, ձշմարտության մարմարցում և բարքերի որինակ, իսկ այն դրամաները, վոր այժմ բեմագրվում են, անմտությունների հայելի յին, հիմարությունների որինակ, ընչաքաղցության նմուշներ։ Յեզ իսկապես, յեթե առաջին գործողության մեջ ներկայացնում են որորոցում գտնվող մի յերեխա իսկ յերկորդում նրան հանդես են բերում միրուքավոր մարդու կերպարանքով, ապա սրանից պես անմիտ հիմարություն չի կարելի հորինել։

Սերվանտեսն իր նովելաներում ջախջախիչ քննադատության և յենթարկում հովերգությունները, վորպես կեղծ և իրականությունն աղավաղող գրական մի ժանր։ Նա ցույց է տալիս, վոր այդ գործերում նկարագրված հովիվները վոչ մի կապ չունեն իրական հովիվների հետ, վոր այդտեղ հովիվների կյանքը իդեալիստականացված է։

«Նովելա շների զրույցի մասին» գործում Բերդանսան իր տեսած իրական հովիվներին համեմատելով հովվական վեպերում հանդես բերված հովիվների հետ, գալիս ե այն յեզրակացության, վոր նրանց մեջ վոչ մի նմանություն չկա։ «Հովվական վեպերը, յեզրակացում և Բերդանսան, մտացածին և գեղեցիկ գրված ստեղծագործություններ են, վորոնք նշանակված են պարապ մարդկանց հաճույք պատճառելու համար, բայց նրանց մեջ վոչ մի ձշմարտություն չկա։»

վերին աստիճանի կարելոր ևն Սերվանտեսի դիտությունները վեպի մասին:

Այս ժամը բնագավառում նույնպես Սերվանտեսի հիմնական պահանջը ուսալիքն է, իրականության ճշմարտապատռում արտացոլումը և այս տեսանկյունով ել նա քննադատության և յենթարկում ասպետական վեպերը: Թվելով ասպետական վեպերի մի շարք բացասական կողմեր, Սերվանտեսը նշում է. «Յեթև ինձ ասեն, վոր այդ տիպի գրքերի հորինողները նպատակ են ունեցել հորինել չեղած և անհավատալի իրադարձություններ, յես դրան կպատասխանեմ, վոր հնարանքը (ԵՎՄԵՍԵԼ) այնքան գեղեցիկ է, վորքան քիչ և նա հնարված թվում: Պատմությունները միայն այս ժամանակ գուր կդան ընթերցողին, յերբ վոր նրանք վերաբերված են այնպես, վոր անհավատալին հավատալի յե թվում...»

Այսպիսի բան չի կարելի տեսնել այն հեղինակի ստեղծագործությունների մեջ, վորը գիտակցաբար շեղվում է բնությունից և ճշմարտությունից, այլ խոսքով այն բանից, ինչ վոր հանդիսանում է գեղարվեստական ստեղծագործության դիմավորություն:

Քննադատելով ասպետական վեպերը, Սերվանտեսը միաժամանակ փայլուն կերպով ըմբռնում եր այն առավելությունները, վոր ուներ վեպը մյուս ժամերի նկատմամբ. «Դատապարտելով այդ գրքերը, յես նրանց մեջ տեսնում եմ մի լավ կողմ, այդ լով այդ գրքերը, յես նրանց մեջ տեսնում եմ մի լավ կողմ, այդ այն է, վոր նրանք հեղինակին լայն ազատություն են տալիս, վոր նրանք հեղինակին իր տաղանդը ամբողջ փայլով արտահայտելու դաշտ են տալիս: Նկարագրելով փոթորիկը, նավի կործանումը, պատերազմները, պատկերացնելով մեծ զորագարի խառալակտերը և այլն, այդպիսի ստեղծագործության մեջ գրողը կարող է հանդիս գալ վորպես աստղաբաշխ, աշխարհագրագետ, յերաժիշտ, պետական մարդ, նույնիսկ կախարդ, յեթե դրա համար հարմար առաջի լինի: Բացի այդ, այն ազատությունը վոր տրվում է գրուզին նման տիպի (վեպի—Հ. Մ.) ստեղծագործության մեջ, նրան հնարագործություն և տալիս հանդիս գալ վորպես լիբրել եպիկը տրագիկ, կոմիկ, հանդիս բերել իր ընդունակությունները պոեզիայի բոլոր սեռերի և բանարվեստի մեջ»:

Այսպիսով, Սերվանտեսը առավելությունը գրական ըուլուսների մեջ տալիս է վեպին, իրորագես գիտակցելով այդ ժամը բոլոր հնարագործությունները:

Ահա թե ինչու պետք է սխալ համարել այն տեսակետը, վոր իբր թե Սերվանտեսը չի հասկացել «Դոն Կիխոտի» արժեքը, վոր նա այդ գործին կարեվոր նշանակություն չի տվել և չի ըմբռնել թե ինչպիսի կարեվոր հեղաշրջում և կատարել վիպական ժամը բերի զարդացման պատմության մեջ:

Սերվանտեսն իր վեպը գրել և ասպետական վեպերի գեմուզգված պարողիայի ձևվով: Այս նրա մոտ կատարվել է միանգամայն գիտակցաբար, նա գիտակցաբար ցանկացել երացան գրական մի ժամը հակադրել մի այլ ժամը: Թե վոր չափով Սերվանտեսին հաջողվեց վարկարեկել ասպետական վեպերը, այդ յերեվում ե այն փաստից, վոր «Դոն Կիխոտի» լույս տեսնելուց հետո Խոպանիայում գրեթե վոչ մի ասպետական վեպ լույս չտեսավ: Այս, ինարկե, չի նշանակում թե ասպետական վեպերի կործանման պատճառը միայն «Դոն Կիխոտն» եր: Բայց վոր «Դոն Կիխոտը» բավականին մնական գեր կատարեց ֆեոդալիզմի կործանման հետ միասին կործանվող ասպետական վեպերի վարկարեկման բնագավառում, այդ մասին յերկու կարծիք լինել չի կարող: Բայց այս ինարկե չի նշանակում, թե Սերվանտեսն ասպետական վեպերի մեջ վոչ մի դրական բան չեր տեսնում:

Սերվանտեսը այդ վեպերի մեջ շատ բարձր եր գնահատում նրանց կոմպոզիցիայի ազատությունն ու բազմազանությունը, կոմպոզիցիայի բաժանումը մի քանի առանձին մասերի (արկածների), վորոնք կապված են իրար հետ մի ամբողջության մեջ գլխավոր հերոսի միջոցով, կյանքի նկարագրության լայնությունը և այլն: Սերվանտեսի նշած ասպետական վեպերի այս ելեմենտները նրա մոտ արմատական վերամշակման են յենթարկվում թե ձեփ և թե բովանդակության տեսակետից:

Հայնեն ուսալիստական վեպի առաջացման համար ամենավճռական մոմենտը համարում է ժողովրդական կյանքի նկարագրության մուտքը գրականության մեջ. «Սերվանտեսը ստեղծեց նոր վեպ, — զբում է Հայնեն, — ասպետական վեպերի մեջ մտցնելով ցածր դասակարգերի ճշմարիտ նկարագրությունը, խառնելով նրան ժողովրդական կյանքի նկարագրությունը»:

Այս գծով արդեն Սերվանտեսի յելակետը յեղել է պիկարոյական նովիլլան: Պիկարոյական նովիլլան է, վոր Խոպանիայում առաջին անգամ տալիս է ցածր դասակարգերի և ժողովրդական

կյանքի նկարագրությունը։ Այստեղ առաջին անգամ հանդիպում ենք նաև տիրոջ և ծառայի նկարագրության սկզբունքին (որինակ, ասպետը և լասարիլլոն)։ Բացի այդ, պիկարոյական նովելլայի եյական առանձնահատկություններից մեկն ել այն եր, վոր այստեղ ծաղրվում են վոչ միայն կործանվող ֆեռդալիզմն ու ասպետությունը, այլև տրվում է մարդու անհատականության դեղրադացիան նոր առաջացող բուրժուական հասարակության պայմաններում։ Պիկարոյական նովելլան զբաղվում եր կենցաղային մասրամասների և նյութական կյանքի նկարագրությամբ։

Պիկարոյական նովելլայի այս սկզբունքները նույնպես ամենաճանաբերել ճեղով ոգտագործված են Սերվանտեսի «Դոն Կիթոտում»։

Սերվանտեսի վեպը աչքի յե ընկնում նաև մի եյական առանձնահատկությամբ։ «Դոն Կիթոտը» առաջացավ վոչ միայն հին արկածային թեմատիկան ժողովրդական կյանքի նկարագրությանը հակադրելու ճանապարհով։ Վեպում եյական դեր և խաղում հեղինակի ըմբռուտացումը մարդու դեղրադացիայի դեմ, թե կործանվող ֆեռդալիզմի և թե նոր առաջացող բուրժուական հասարակության պայմաններում։

Սերվանտեսի վեպն արդեն ցույց է տալիս, թե ինչ է նշանակում «բուրժուական հասարակության եպոս», ինչպես անվանում եր վեպը Հեղելը։ Յեթե եպոսի մեջ հերոսը գտնվում եր ընդհանուր, կոլեկտիվ շահերի սահմաններում և նրա անհատական շահերի և հասարակական շահերի բաղխումն անհնար ե, և այս իմաստով յեթե եպոսի հերոսը հանդիսանում եր տվյալ ժողովրդի լավագույն կողմերի մարմնացումը, ապա «բուրժուական հասարակության եպոսը» կառուցվում է բոլորովին հակառակ սկզբունքի վրա։ Եյականն այստեղ անհատի և հասարակության հակադրությունն ե, անհատական և հասարակական շահերի հակադրությունը։

«Քաղաքացիական հասարակությունը, — գրել է Հեղելը, — հանդիսանում է անհատական մասնավոր շահերի բաղխման դաշտ, բոլորի պայքարը բոլորի դեմ»¹⁾)։ Մարքոն այս մասին գրել ե. «Ֆեռդալական հասարակությունը քայլացից մինչև իր

հիմքը — մարդը, բայց այն մարդը, վորը իրավես հանդիսանում է նրա հիմքը, մինչև եզրիստական մարդը»¹⁾։

Ինչպես պիկարոյական նովելլան, այնպես ել Սերվանտեսի վեպը կառուցված է անհատի և հասարակության հակադրության հիմքի վրա։ Դոն Կիթոտը վերջիվերջո հակադրվում է գոյություն ունեցող վողջ հասարակությանը։ Վեպը սկզբից մինչև վերջը կառուցվում է անտաղոնիստական ուժերի հակադրության վրա։ Բայց Սերվանտեսի, ինչպես նաև Ռաբիցի մոտ, «գրական հերոսի» պրոբլեմը լուծվում է յուրահատուկ ձևով։ Էմբոստանալով ֆեռդալիզմի և «նազդ փողի» պրակտիկայի դեմ, պատկերացնելով մարդու անհատականության վոտնահարման հին և նոր մեթոդներն ու ձեռքը մարդու լիակատար ազատության և ինքնագործունեյության տեսակետից, Սերվանտեսը և Ռաբլեն այնուամենայի իրենց հերոսների մեջ տեսնում են դրական շատ կողմեր։ Ռեալիստական վեպի զարգացումը Սերվանտեսից հետո գնում է դրական հերոսի «անհետացման ճանապարհով», վեպի կենտրոնական հերոսը դառնում է «եգոխստական մարդը» իսկ «նկարագրության որյեկտը», «մասնավոր շահերի բաղման դաշտը» արդեն լիապես իր բոլոր կողմերով հանդես յեկող բուրժուական հասարակությունը։

Ինչպես Սերվանտեսի վեպը, այնպես ել առհասարակ վերածնության դարաշրջանի ուսալիստական վեպը հետագա դարաշրջանների վեպերից տարբերվում է նաև իր վրձով։

Սերվանտեսի վեպում ֆանտաստիկան առհասարակ շատ ուժեղ է, բայց այդ ֆանտաստիկան ուսալիստական վեպ հետագա դարաշրջանների վեպերից տարբերվում է նաև իր վրձով։

Ահա, որինակ, ինչպես ե սկսվում նրա վեպը. «Մանչայի գյուղերից մեկում մի կալվածատեր եր ապրում։ Նա ուներ նիզակ, հին վահան, քնձոռոտ ձի և վորորդական շուն։ Նրա յեկամտի յերեք քառորդը կլանում եր սնունդը, տաք կերակուրը, ավելի հաճախ տավարի մարից, քան վոչխարի, ընթրիքին՝ սովորական ապուր, շարաթ որերը՝ խաշ, ուրբաթ՝ վուպ, իսկ կիրակի որերը՝ բացի այդ նաև մի աղամի։ Մնացածը գնում եր շորի՝

¹⁾ К. Маркс, „Критика философии государственного права Гегеля“ Собр. соч. т. I, стр. 563

1) К. Маркс, „Критика философии государственного права Гегеля“ № 390. ընդդումը Մարքսին ե.

Նուրբ մահուղից կարած կատա, թավշյա վարտիկ և նույն կտուրից հողաթափ՝ տոն որերի համար, իսկ շաբաթվա մնացած որեւրին տնայնագործական մահուղից զգեստ եր հագնում: Նա տանը տնտեսումի եր պահում, վոր քառասունից անց եր, քրոջ աղջկան, վորը քսանին մոտ եր և մի ծառա առտնին և դաշտային աշխատանքների համար, վոր տեղը յեկած ժամանակ կարող եր ձի ել թամքել պարտեզում ել մկրատ բանեցնել: Մեր հիդարդոն մոտ հիսուն տարեկան եր: Նա ուներ ամուր և նիհար կազմվածք, սուր դեմք, վեր եր կենում լույսը չբացված և վորսորդության սիրահար եր»:

Այս նույն ոեալիստական վոճով զբված և ամբողջ վեպը: Բայց «Դոն Կիխոտը» վերոհիշյալ բոլոր կողմերով ոեալիստական լինելով հանդերձ, ֆանտաստիկական և իր ֆաբուլայով:

Ֆանտաստիկան Սերվանտեսի վեպում առաջանում է հին, մեռնող աշխարհայցքի ու աշխարհի և բուրժուական իրականության սատիրական հանդիպման ճանապարհով: Մյուս կողմից ֆանտաստիկան առաջանում է հումանիստական բարձր սկզբունքների և դոն Կիխոտի գործունեյության ասպարեզի՝ քաղաքացիական հասարակության հանդիպման ճանապարհով: Ամբողջ վեպում (ինչպես նաև նովելլաներում) ստացվում է յերկու պլան՝ ֆանտաստիկական և իրական, յերկու ֆաբուլա և սյուժեն՝ ֆանտաստիկական և իրական: Այս յերկությամբ տառապում են նույնիսկ դոն Կիխոտը և Սանչոն: Մի կողմից ցույց ե տրվում, վոր դոն Կիխոտը գործում է բուրժուական հասարակության պայմաններում իսկ մյուս կողմից ապրում է ասպետական վեպերի հորինած ֆանտաստիկայում և իր հումանիստական բարձր իդեալների աշխարհում:

Այս յերկությամբ տառապում է նաև վեպի կոմպոզիցիան: Գերմանական ռոմանտիկները, նրանցից հետո Շելլինգը և Հեգելը հատկապես շեշտում եյին այս հանգամանքը, վեպի ֆաբուլայի մեջ զետեղված նովելլաները համեմատելով ֆաբուլայի ընդհանուր ընթացքի հետ:

Բայց, չնայած վեպի այդ ֆանտաստիկային, «Դոն Կիխոտը» հանդիսանում է Վերածնության դարաշրջանի ոեալիստական դրականության խոշորագույն հուշարձաններից մեկը, իսկ նրա անմահ հեղինակը մասնատիրական պատմաշրջանի այդ նույն ոեալիստական գրականության հիմնադիրներից և մեծագույն հանձարներից մեկը:





8638

ԳԻՆԸ 2 ԱՐԵՔԼԻ